Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՎԻՃԱԿԻ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ֆինանսական բնագավառ

Պետական ֆինանսների կառավարման համակարգի ռազմավարական նպատակները հաշվետու ժամանակաշրջանում ուղղված են եղել հանրային կառավարման համակարգի լավագույն արդյունքի և հասարակությանը որակյալ հանրային ծառայությունների մատուցմանը, հանրային կյանքի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար արդյունավետ միջավայրի ստեղծմանը: Պետական կառավարման համակարգի արդյունավետությունն ուղղակիորեն կապված է եղել հանրային միջոցների արդյունավետ ծախսման հետ: Ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից հաշվետու ժամանակահատվածում մարզպետի աշխատակազմում ապահովվել է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը:

ՀՀ Արմավիրի մարզում 2023թ. ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 14,196,933.4 հազ. դրամ՝ 2022թ. պլանավորված 11, 711, 228. 2 հազ. դրամի համեմատ: 2023թ. տարեկան կատարողականը 30. 12. 2023թ. դրությամբ կազմել է 14,656,745.1 հազ. դրամ, նախորդ տարվա 11,441,798,6 հազ. դրամի համեմատ: Կատարողականը կազմել է 103.2%, նախորդ տարվա 97,7%-ի համեմատ:

2023թ. մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 4,745,402.4 հազ. դրամ, որը 2022թ. պլանավորված 4,266,443. 8 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 478,958,6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 30. 12. 2023թ. դրությամբ կազմել է 5,140,372,1 հազ. դրամ՝ նախորդ տարվա 4,353,525. 9 հազ. դրամի համեմատ: Կատարողականը կազմել է 108.3%, նախորդ տարվա 102.0%-ի համեմատ:

2023թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի համայնքներին պետական բյուջեից տրամադրվել է 6,849,910. 3 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ հատկացվել է համայնքներին: Աջակցություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքների բյուջեների նախագծերի նախապատրաստման և բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման հարցում:

Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն

Գյուղատնտեսություն. Մարզի 123095,2հա վարչական տարածքում 96784,8հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 43651,47հա 2023թ. օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության մեջ՝ 24992,491հա վարելահողեր, 6471,28հա խաղողի և 12187,7հա պտղատու այգիներ:

Գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի տնօրինվել են հետևյալ կերպ.

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հ/հ	**Կուլտուրայի անվանումը**	**Ցանքատարածությունը /հա/**	**Միջին բերքը ց/հա**	**Համախառն բերքը /հազար տոննա/**	**Այդ թվում հավաքված է կրկնակի միջշարային տարածություններից /հազար տոննա/**
1.	Հացահատիկ	3784,2	41,5	15,69	-
2.	Հատիկաընդեղեն	136,53	30,8	0,42	-
3.	Տեխնիկական մշակաբույսեր	231,4	16,8	0,39	-
4.	Կարտոֆիլ	1407,67	326,5	45,95	-
5.	Բոստան	2825,4	283,3	80,04	-
6.	Բանջարեղեն	7919,5	372,33	318,85	23,98
7.	Բազմամյա և միամյա խոտաբույսեր	8456,42	116,25	105,57	7,26
8.	Ընդամենը ցանքային տարածություն	25507,15	-	-	-
9.	Այդ թվում ցանված է այգեմիջյան տարածություններում	514,66	-	-	-

10.	Պտուղ	12187,7/9634,7	112,3	108,21	-
11.	Խաղող	6471,28/5890,99	176,1	103,9	
12.	Գյուղատնտեսական արտադրության մեջ օգտագործված հողատարածությունը	43651,47	-	-	-

2023թ մարզում հիմնվել են 1047,88հա բազմամյա տնկարքներ, որից 990,32հա պտղատու, այդ թվում՝ ինտենսիվ 677,24 հա և 57,56հա խաղողի այգիներ:

2023թ գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք: Ինչպես հանրապետության այնպես էլ մարզի վարչական տարածքը ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից: 2023թ. տեղի ունեցած կարկտահարությունները և քամիները մեծ վնաս պատճառեցին մարզի գյուղատնտեսական արտադրությանը: Հունիսի 4-ին տեղի ունեցած կարկտահարության հետևանքով վնասվեցին Մեծամոր համայնքի Եղեգնուտ, Զարթոնք, Արգավանդ և Արտաշար բնակավայրերի 424 հողօգտագործողների 313,303հա հողատարածությունները՝ 80 – 100%-ով: Կարկտահարության ռիսկերը մեղմելու նպատակով մարզի 2131,78հա խաղողի և պտղի տարածությունները պատվել են հակակարկտային ցանցերով: Իրականացվել են մարզում տեղակայված 239 հակակարկտային կայանների ապակոնսերվացման, լիցքավորման և առկա թերությունների վերացման աշխատանքները:

Մարզում ջերմոցների և ջերմատների տարածությունը կազմում է 988,345հա, կաթիլային ոռոգվող տարածությունները 4928,31հա, սառնարանային տնտեսությունների կարողությունները 28645տոննա:

2023թ. ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 6784տ պտուղ, 10541տ բանջարեղեն և 68445,1տ խաղող: Մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտներին և արտահանող կազմակերպություններին գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում: Խաղողի մթերման աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը իրականացրել է մշտադիտարկում խաղող մթերող կազմակերպություններում: Ներդրված ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ մթերել խաղողի արտադրված ողջ բերքը:

Հաշվետու տարում ՀՀ Արմավիրի մարզպետի 09.12.2022թ թիվ ՄՈ/697-Ա որոշման հիման վրա կազմակերպվել և համակարգվել են համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: 2023թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել են 52987 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր 15567, մանր եղջերավոր 137792, խոզեր 20043, 1040985 թռչուններ: 2023թ. մարտ ամսին ավարտվել են խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման աշխատանքները: Համակարգվել և վերահսկվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը: 2023թ. հունիսի 24-ից իրականացվել են «Դաբաղ» հիվանդության «ՍԱՏ» տիպի դեմ պատվաստման 2-րդ փուլի աշխատանքները, հակահամաճարակային միջոցառումները իրականացվել են ամբողջությամբ: Հակահամաճարակային իրավիճակը բնութագրվում է կայուն: 2023թ. ընթացքում արտադրվել է 6892 տոննա տավարի, 2905 տոննա ոչխարի, 779 տոննա խոզի, 1180 տոննա թռչնի միս, 37778 տոննա կաթ, 273 տոննա բուրդ և 55,5 միլիոն հատ ձու:

Համակարգվել է մարզում գործող 3 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը՝ ոռոգման համակարգի սպասարկման, կառուցման ու վերականգնման, ոռոգման ջրի վարձավճարների գանձման ուղղությամբ: Ուսումնասիրվել և վերահսկվել է ջրատնտեսական համակարգերի գործունեությունը ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների իրականացման ուղղությամբ: ՀՀ Արմավիրի մարզպետի 28.02.2023թ. թիվ ՄՈ/67-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից վերահսկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների, մայր ջրանցքների և ջրամղիչ կայանների մաքրման և վերականգնման

աշխատանքները: Արդյունքում 233,3կմ միջտնտեսային, 4981,2կմ ներտնտեսային ցանցերը, 335 խորքային հորերը և 64 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է ապրիլի 14-ից:

2023թ. բնութագրվել է որպես սակավաջուր, քանի որ պակաս էր լցվել Ախուրյանի ջրամբարը, իսկ գետերում ջրի ելը նվազել էր: Ոռոգման բնագավառում ստեղծված լարվածությունը մեղմելու նպատակով սահմանվել է ջրաշրջանառություն և կազմվել ջրամատակարարման հստակ գրաֆիկ, միաժամանակ վերանորոգվել են խորքային հորեր և ոռոգման նպատակով օգտագործվել են համայնքների հաշվեկշռում գտնվող խմելու ջրի նպատակին ծառայող խորքային հորերի հզորությունները: Լրացուցիչ ջրառ է իրականացվել Սևանա լճից, որից բաց թողնվող ջրի օպտիմալ և հավասարաչափ բաշխումը իրականացնելու և վերահսկելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ:

Մարզում գործում են թվով 40 ջրավազաններ, որոնց տարողությունը կազմում է 1,74 մլն մետր խորանարդ, որով 3788,62 հեկտարի վրա իրականացվում է կաթիլային և 63,6 հեկտարի վրա անձրևացման եղանակով ոռոգում:

2023 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 17857 ջրօգտագործողներին մատակարարվել է 285,3 միլիոն մետր խորանարդ ոռոգման ջուր 3,138 մլրդ. դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 1,802 մլրդ. դրամ, կամ գանձման մակարդակը կազմել է 57,4%:

Ոռոգման ջրամատակարարման բարելավման ուղղությամբ մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել 2023թ. , մասնավորապես.

1. Պետություն համայնք համագործակցության սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

ա/Մեծամոր համայնքի 9-ը բնակավայրերում իրականացվել են թվով 10 խորքային հորերի վերանորոգման աշխատանքներ:

բ/Արաքս համայնքում կառուցվել է 2 պոմպակայան՝ Լուսագյուղ և Արաքս բնակավայրերում:

գ/Խոյ համայնքում հիմնանորոգվել են 3 խորքային հորեր, որից 2-ը Արշալույս և 1-ը Հայթաղ բնակավայրերում:

Նշված աշխատանքները ոչ միայն բարելավելու են ջրամատակարարումը, այլ նաև զգալիորեն կրճատելու են համակարգում դեռևս գոյություն ունեցող մեծ կորուստները:

Շրջակա միջավայրի նախարարի 2023թ. ապրիլի 11-ի N 131-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմում ապահովվել է Արարատյան դաշտի խորքային հորերի հաշվառման, ապօրինի ջրօգտագործման գույքագրման և կոորդինատների ճշգրտման աշխատանքներին մասնակցություն:

Աշխատանքային ծրագրին համապատասխան և մարզպետի 01.02.2023թ թիվ ՄՈ/41-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել և գույքագրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և տեղեկատվություն ներկայացրել ՀՀ կառավարություն:

Մարզպետի մշտական ուշադրության կենտրոնում են եղել հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: Ընթացիկ տարում պետբյուջեի միջոցների հաշվին 6 բնակավայրերում մաքրվել է 28,86կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց: Այս բնագավառում դեռևս հիմնախնդիր է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

Ուսումնասիրվել, քննարկվել և համակարգվել են համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման գործընթացները:

Գարնանացանի նախապատրաստական աշխատանքների և ընթացքի վերաբերյալ հարցերը ներկայացվել են կայացած մարզխորհրդի նիստերում:

Հայաստանի Հանրապետությունում 2010-14թթ. սերմնաբուծության զարգացնան ծրագրի շրջանակներում հաշվետու տարում 2023թ. գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուների հայտերը մարզպետի աշխատակազմը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Յուրաքանչյուր ամսում կատարված ցանքատարածությունների և ստացված համախառն բերքի վերաբերյալ օպերատիվ տվյալները՝ ըստ մշակաբույսերի, ներկայացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Համակարգել է մարզի տարածքում գործող ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգում գործող գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի մասնագիտական ծառայությունների գործունեությունը և մկնանման կրծողներով տարածվածության հաշվառման մոնիթորինգի իրականացումը: Կատարված մոնիթորինգի արդյունքներով գարնանը և աշնանը մարզին հատկացվել է 352 լիտր մկնասպան պրեպարատ, որը բաշխվել է մարզի թվով 3 համայնքների 34 բնակավայրերին, որոնք 4400հա վրա իրականացրել են պայքարի աշխատանքներ:

Համակարգվել և վարվել են համայնքներում բազմամյա տնկարկների հիմնման և համապատասխան փաստաթղթային ձևակերպման աշխատանքները:

2023թ. ընթացքում Արմավիրի մարզում պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիր

Ինտենսիվ ագիների հիմնման համար ծախսերի մասնակի փոխհատուցման բաղադրիչով՝ քաղաքացիներից ստացվել է ծրագրին մասնակցության 4 դիմում՝ 35հա հողատարածքի վրա ինտենսիվ այգու հիմնման համար: Կնքվել է «Պետական աջակցություն տրամադրելու մասին» 15 պայմանագիր՝ 75.177հա հողատարածքի վրա ինտենսիվ այգու հիմնման համար: Տրամադրվել է 5 փոխհատուցում՝ 118.2 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով՝ 15.3395հա ընդհանուր տարածքով այգեհիմնման համար: Վարկային բաղադրիչով կնքվել է թվով 11 վարկային պայմանագիր՝ 43.6 մլրդ ՀՀ դրամի չափով՝ 1238հա ընդհանուր տարածքով այգեհիմնման համար:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար, փոխհատուցման բաղադրիչով, քաղաքացիներից ստացվել է մասնակցության 4 դիմում՝ 11.1725հա ընդհանուր մակերեսով հողատարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու համար և 1 դիմում ջրավազանի ընդլայնման համար: Ծրագրի շրջանակում կնքվել է 9 պայմանագիր՝ 37.4հա համար: Թվով 6 շահառուի տրամադրվել է ընդհանուր 33.8 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 30.6205հա ընդհանուր մակերեսով հողատարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու համար: Վարկային բաղադրիչով կնքվել է 8 վարկային պայմանագիր՝ 64.7 մլն ՀՀ դրամի չափով՝ 95.38հա ընդհանուր մակերեսով հողատարածքում արդիական ոռոգման համակարգ ներդնելու համար:

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 361-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում թվով 1 շահառուի տրամադրվել է 2.6 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 0. 5հա ընդհանուր տարածքով այգեհիմնման համար:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1612-L որոշմամբ հաստատված Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում կնքվել է 2 պայմանագիր՝ 23.8 մլն ՀՀ դրամի չափով, ընդհանուր 2740 քառակուսի մետր արտադրական տարածքով ջերմատան կառուցման համար:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-L որոշմամբ հաստատված Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում ներկայացվել է մասնակցության 1 դիմում, կնքվել է «Պետական աջակցություն տրամադրելու մասին» 1 պայմանագիր՝ 3-րդ մոդելի՝ 56 գլուխ ԽԵԿ-ի համար նախատեսված «Խելացի» անասնաշենքի կառուցման նպատակով:

5. ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-L որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիր

Ծրագրի շրջանակում ներկայացվել է մասնակցության 1 հայտ և կնքվել է պայմանագիր՝ խոզաբուծության ոլորտում շուրջ 2. 09 մլրդ ՀՀ դրամի չափով ներդրում կատարելու համար:

6.ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-L որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Արմավիրի մարզի շահառուների կողմից ներկայացված 51 հայտ 819.6 մլն դրամի չափով, կնքվել է 146 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 383.3 մլն դրամ:

7. ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-L որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Արմավիրի մարզի շահառուների կողմից ներկայացված 27 հայտ 541.0 մլն դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 310.2 մլն դրամ:

8.ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-L որոշմամբ հաստատված ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակում 2023 թվականին՝ նոյեմբերի 30-ի դրությամբ Արմավիրի մարզում ձեռք է բերվել 81 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 46 միավոր տրակտոր: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 947.5 մլն դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 171.8 մլն դրամ:

9. ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-L որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագիր

Ծրագրի շրջանակում Արմավիրի մարզում 2023թ. գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 1555 հատ ապահովագրության պայմանագիր՝ 1395հա ընդհանուր մակերեսով տարածքի համար: Ապահովագրվել են հիմնականում ծիրան, խաղող, հացահատիկ, սալոր և դեղձ մշակաբույսերը՝ կարկուտ, հրդեհ, գարնանային ցրտահարում ռիսկերից:

2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 839 ապահովագրական հատուցում՝ շուրջ 710.8 մլն դրամի չափով:

2024 թվականին շարունակվելու են իրականացվել վերը նշված ծրագրերը, որոնցից կարող են օգտվել հանրապետության բոլոր մարզերի և Երևան քաղաքի շահառուները:

Հաշվետու տարում ապահովվել է հաղորդագրություններով և մասնագիտական խորհրդատվությամբ հողի մշակության, բույսերի խնամքի, բույսերի և ընտանի կենդանիների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպումը, տարերային աղետներից վնասված ցանքատարածություններում կիրառվելիք ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման, որակյալ սերմացուների, տնկանյութերի և թունաքիմիկատների ձեռք բերման, անասնաբուժական բուժպրոֆիլակտիկ միջոցառումների կիրառման, մարզում բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման ու իրականացվող միջոցառուների, մարզում միակ «Որդան Կարմիր» պետական ագելոցի, երեք բնական հուշարձանների, կենսաբազմազանության պահպանման ու կենսագործունեության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Մարզում կանաչապատ տարածքների ավելացման ուղղությամբ «Հայաստան ծառատունկ» ծրագրի միջոցով, ընթացիկ տարում կազմակերպվել ու իրականացվել են տնկումներ շուրջ 5736 ծառերի և թփերի: Մարզի 47 բնակավայրերի տարաբնույթ կազմակերպություններում /գյուղապետարան, դպրոց, եկեղեցի, մշակույթի տուն, անտառ պուրակներ, զբոսայգիներ ու ճանապարհների եզրեր/ իրականացրվել են ծառերի ու թփերի հիմնումներ, ավելի քան 5,7 հա ընդհանուր մակերեսով:

2023թ. մարտի 25-ին իրականացվել է համամարզային ծառատունկ: Ծառատունկի ընթացքում համայնքներում տնկվել են 3580 հատ գեղատեսիլ ծառերի և թփերի տնկիներ, որը անվճար ձեռք է բերվել «Հայաստան ծառատունկ» ծրագրից:

Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում՝ 2023թ. նոյեմբերի 25-ից մինչև 2024թ. հունվարի 20-ը ներառյալ, սիգ ձկան և ձկնկիթի վաճառքը մարզի տարածքում բացառելու նպատակով ինչպես առանձին, այնպես էլ ոստիկանության, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի և համայնքների ներկայացուցիչների հետ համատեղ իրականացրել են ստուգայցեր:

ՀՀ Արմավիրի մարզպետի 07.04.2023 թվականի թիվ ՄՈ/134-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբն իրականացրել է մշտադիտարկում ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման, հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վերահսկողության և բնագավառում տիրող իրավիճակի ուղղությամբ:

Համակարգվել և կազմակերպվել են օգտակար հանածոների արդյունահանման համար հողհատկացման տարածքների արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանման հարցերը: Կատարված ուսումնասիրությունների և ստուգայցերի արդյունքները ամփոփվել և զեկուցվել է մարզպետին, համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարություններ:

Քաղաքաշինություն, հողաշինություն և ենթակառուցվածքների կառավարում

Քաղաքաշինություն. Իրականացվել են մշտադիտարկման գործառույթներ 2022-2023թթ.. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շուրջ 172 օբյեկտներում: Կատարվել են 616 այցելություններ շին. աշխատանքների իրականացման ընթացքում՝ 65 օբյեկտներում արձանագրվել են 192 թերություններ, որոնք հետագայում աշխատանքային ընթացակարգով վերացվել են:

Կատարվել են օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի անդամի պարտականություններ՝ ՀՀ Արմավիրի մարզի համայնքների 118 օբյեկտներում:

Մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ավարտված շինարարական 17 օբյեկտների ուսումնասիրության և ստուգիչ չափագրման աշխատանքներին:

Մշտապես ուշադրության կենտրոնում են եղել ՀՀ Արմավիրի մարզում ՀՀ կառավարության կողմից պատվիրակված թվով 6 մանկապարտեզների, 2 դպրոցի և 9 դպրոցների մարզադահլիճների կառուցման և վերակառուցման, ինչպես նաև ՀՏՋՀ կողմից կառուցվող թվով 3 դպրոցների շինարարական աշխատանքների ընթացքը:

ՀՀ օրենսդրությանը համապատասխան ուսումնասիրվել և վերահսկվել է ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ մուտքագրված 217 քաղաքաշինական փաթեթ (հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում), որից 190-ը համաձայնեցվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ և 27 քաղաքաշինական փաթեթ ՀՀ Արմավիրի մարզպետի հետ:

Համայնքներ լրամշակման է ուղարկվել 175 փաթեթ, ընթացքի մեջ է 32 գործ:

Կատարվել են ինքնակամ շինությունների հաշվառման, կասեցման գործառույթներ և համապատասխան տեղեկատվությունը է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Ըստ անհրաժեշտության ստուգումներ են անցկացվել տեղական ինքնակառավարման մարմիններում՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա:

Հանձնաժողովի կազմում իրականացվել է իրավական հսկողություն մարզի 4 խոշորացված համայնքներում:

Տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն համայնքների ղեկավարներին և տնտեսվարողներին՝ նոր կառուցվող, հինանորոգվող և վերանորոգվող շենք-շինությունների նախագծման ու կառուցման աշխատանքներում:

Վերահսկողություն է իրականացվել համայնքների քաղաքաշինության գործունեությունների, այդ թվում նաև անօրինական շինարարությունների կանխման, կասեցման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ:

Մասնակցություն է ցուցաբերվել մարզում սուբվենցիոն ծրագրերով համայնքներում իրականացված աշխատանքների ավարտական, հանձնման-ընդունման աշխատանքներին:

Արդյունաբերության, բնակարանային կոմունալ և անշարժ գույքի կադաստրի և աղբահանության բնագավառ. Կազմվել են հաշվետվություններ մարզպետի աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ և ներկայացվել համապատասխան մարմիններին: Ըստ անհրաժեշտության ստուգումներ են անցկացվել տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա:

Վերահսկվել են մարզի գյուղական համայնքների անապահով ընտանիքների գազամատակարարման ապահովման ծրագրերը:

2023թ. ապրիլ ամսին մեկ համամարզային և մեկ համապետական շաբաթօրյակների ծրագրերի շրջանակներում անցկացված միջոցառումների շրջանակում համակարգվել է աղբահանության աշխատանքների իրականացումը:

Մարզի բնակչության շրջանում աղիքային վարակիչ հիվանդությունների և ջրային բռնկումների կանխարգելումից խուսափելու համար հանձնարարվել են համայնքների ղեկավարներին ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Առաջարկվել է համայնքների ղեկավարներին խստացնել հսկողությունը աղբահանության վարձավճարների հավաքագրման և իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքման վերաբերյալ գործողությունները: Բնակավայրերի մաքրման և աղբահեռացման ուղղությամբ Արմավիրի

մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից պարբերաբար ստուգայցեր են կատարվել համայնքներ, տեղ գտած թերությունների վերացման նպատակով համապատասխան առաջարկություններ են արվել համայնքների ղեկավարներին՝ կազմակերպելով և համակարգելով վերջիններիս գործունեությունը տվյալ ոլորտում:

Մարզում առկա են 3 օրինական աղբավայրեր, Բաղրամյան համայնքում առկա են 14 բացվող և փակվող աղբավայրեր:

2023թ. պլանավորված տարեկան եկամուտը աղբահանությունից կազմել է 412,183. 5հազ. դրամ, 30. 12. 2023թ. դրությամբ հավաքագրումը կազմել է 379,080. 2 հազ. դրամ, կատարողականը կազմել է 92. 0%: Համայնքներից ընդունվել, ամփոփվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել՝ աղբահանության գծով ամսական հավաքագրված գումարների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ:

Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքով նախատեսված գործառույթների պահանջների պարտադիր կատարման նպատակով՝ համակարգվել են համայնքների կողմից ստուգումների և հսկողության արդյունքների իրականացումը և ամփոփ տեղեկատվության ապահովումը:

Առևտրի և սպասարկման օբյեկտներ 1590, որից՝

Առևտրի օբյեկտ՝ 1155

Հանրային սնունդ՝ 181

Կենցաղսպասարկման՝ 254:

Ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում իրականացվել են ջրային տնտեսության պետական կոմիտեի կազմակերպությունների կողմից սպասարկվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքների համակարգման և կազմակերպման գործընթացները:

Առաջարկվել են համայնքների ղեկավարներին գերեզմանատեղերի անվճար և վճարովի հիմունքներով տրամադրման գործընթացի, բարեկարգման, պահպանման ու շահագործման կանոնները պահպանելու նկատմամբ՝ սահմանել խիստ հսկողություն:

Ճանապարհաշինություն՝ ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքների վերաբերյալ իրականացված աշխատանքներ. ՀՀ Արմավիրի մարզի ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 604,7կմ, որից՝

- միջպետական նշանակության՝ 90,3կմ
- հանրապետական նշանակության՝ 124,5կմ
- մարզային /տեղական/ նշանակության 393,8կմ:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր օգտագործման մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհներից վատ և շատ վատ վիճակում են գտնվում 101,0կմ-ը:

2023թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների (ընդհանուր՝ 391,8կմ) ամառային և ձմեռային պահպանման աշխատանքների համար հատկացվել է 89,440. 0հազ. դրամ, որով իրականացվում է 75,21կմ ամառային պահպանություն /փոսալցման, աղբի, օտար առարկաների հեռացման, կողնակների հարթեցման/ և 115,3կմ ձմեռային պահպանություն:

ՀՀ Արմավիրի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների 1049 «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի, 11002 «Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» միջոցառման գծով, 2024թ. բյուջետային լրացուցիչ ֆինանսավորման վերաբերյալ ընթացիկ ամառային, ձմեռային պահպանման, գծանշման և նշանների տեղադրման աշխատանքների համար հատկացվել է 190. 000. 000 ՀՀ դրամ, որից՝

- 100,000,000 ՀՀ դրամը՝ ամառային -85,5կմ և ձմեռային -130,65կմ պահպանման

• 90,000,000 ՀՀ դրամը՝ 85,500,000 ՀՀ դրամ ընդհանուր 270կմ գծանշման և նախատեսվում է 4,500. 000 ՀՀ դրամ նշագծման աշխատանանքների և նոր տեղադրվող նշանների համար՝ 150հատ: Նշագծման և նշանների տեղադրման համար նախատեսվող գումարները կարող են փոփոխվել:

ՀՀ Արմավիրի մարզում 2023թ. ընփացքում հիմնանորգվել և վերանորոգվել են սուբվենցիոն ծրագրերով 19,7կմ և ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 28,36կմ ճանապարհներ:

2023թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացվող Հ-17, /Մ-5/ (Արմավիր)-/Մ-9/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ2+070 - կմ3+280, կմ3+930 - կմ5+230, կմ12+060 - կմ22+800 հատվածների միջին նորոգման և Հ-76, /Մ-5/ - Ակնալիճ - Մեծամորի թանգարան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ2+050 հատվածի միջին նորոգման և քանդման (Ա/բ քերուկ/ֆրեզ/) աշխատանքների ընթացքում իրականացվել է վերահսկողություն և գոյացած 5100մ/խ Ա/բ քերուկը/ֆրեզ/ հանձնվել է մարզի համայնքներին:

Միասնական երթուղային ցանց. 2021 թվականի նոյեմբերի 9-ին կայացել է ՀՀ Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը, որի արդյունքում Արմավիրի մարզի Վաղարշապատ տարածաշրջանի միասնական երթուղիների սպասարկման իրավունք է ստացել «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲԸ-ն՝ 10 տարի սպասարկման ժամկետով:

Ներկայումս Արմավիրի մարզի Արմավիր տարածաշրջանի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթի արդյունքները վիճարկվում են դատական կարգով: Արմավիր տարածաշրջանի նոր տրանսպորտային ցանցի սպասարկումը կիրականացվի դատական գործընթացի ավարտից հետո:

Արմավիր տարածաշրջանի տրանսպորտային ցանցի սպասարկումը իրականացվում է հետևյալ կազմակերպությունների կողմից. «Գալակտիկա Տրանս Սերվիս», «Ալ-Տրանս», «Տրանս Կոմֆորտ-999», «Ռամ-Ակա», «Հրաչյա և Տիգրան» ՍՊԸ:

Մարզի գրեթե բոլոր համայնքները տրանսպորտային կապով կապված են մարզկենտրոնի հետ: Մարզի համայնքներից մարզկենտրոն գործում է 24 միկրոավտոբուսային և ավտոբուսային ներմարզային երթուղիներ, իսկ մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում են 10 ավտոբուսային և միկրոավտոբուսային միջմարզային երթուղիներ:

Հողաշինություն. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով կազմվել ՀՀ քաղաքաշինության կոմիտե է ներկայացվել 98 նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված 35 դրական եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

Վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով կատարված աշխատանքների նկատմամբ, հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել տվյալներ:

Իրականացվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշմամբ և ՀՀ Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. N 151 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի Արմավիր, Վաղարշապատ, Բաղրամյան, Մեծամոր, Խոյ և Արաքս համայնքների բնակավայրերի համար տրվել է եզրակացություն՝ բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեք

հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ /ընդամենը 244հա, որից խաղողի այգի՝ 167.9 հա, պտղատու այգի՝ 76.14հա/:

ՀՀ Արմավիրի մարզում «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» կենտրոն հիմնելու նպատակով «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին հողատարածք հատկացնելու համար օրենքով սահմանված կարգով Արմավիրի համայնքապետարանի հետ կազմվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել հողամասերի վկայականները, հատակագծերը և ՀՀ կառավարության «Հողամասի նվիրաբերությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծը, որի արդյունքում շուրջ 8.0հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության աշխատանքներ են իրականացվել:

Քննարկման արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել 2022 թվականի համար տիեզերալուսանկարների պահանջարկի վերաբերյալ հայտերը:

Ընթացքի մեջ են ՓՀԷԿ-երի սեփականությունը հանդիսացող հողամասերի կադաստրային քարտեզներում հողամասերի սահմանների և տեղադիրքերի սխալների, ինչպես նաև նպատակային ու գործառնական նշանակությունների անհամապատասխանությունների շտկման ուղղությամբ տարվող աշխատանքները:

ՀՀ կադաստրի կոմիտեի e-cadastre.am էլեկտրոնային հարթակում առկա հասցեների և փաստացի հասցեավորման վերաբերյալ համայնքապետարաններում առկա տվյալների համեմատման ուղղությամբ տարված աշխատանքների արդյունքում բացի Վաղարշապատ և Փարաքար համայնքներից մյուս համայնքներում իրականացվել են ճշգրտման աշխատանքներ:

Օրենքով սահմանված կարգով իրականացվել է քաղաքացիների ընդունելություն և հողաշինության ոլորտին առնչվող խորհրդատվություն, ինչպես համայնքների ղեկավարների, այնպես էլ իրավաբանական անձանց հետ:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Կրթություն. Հաշվետու ժամանակաշրջանում մարզում գործել է 119 հանրակրթական ուսումնական հաստատություն: Ընդհանուր առմամբ՝ քաղաքային 25 և գյուղական՝ 95 դպրոցներ, այդ թվում՝

- մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական դպրոց, որից 91-ը՝ միջնակարգ, 20-ը՝ հիմնական, նախակրթարան գործում է 62-ում,
- ԿԳՄՍ նախարարության ենթակայության 6 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում՝ 5 ավագ դպրոց, 1 ռազմամարզական վարժարան,
- 2 ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «ԷՕՐՆԵԿԵԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» հանրակրթական ուսումնական հաստատություն-հիմնարկ պետական ոչ առևտրային կազմակերպություն և «Գրիգոր Լուսավորիչ» ոչ պետական կրթահամալիր:

Մարզում գործում են ԿԳՄՍ նախարարության ենթակայության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝

- 3 պետական քոլեջ,
- 1 արհեստագործական ուսումնարան:

2023-2024 ուսումնական տարում մարզի դպրոցների աշակերտների թիվը կազմել է՝ 37439, նախակրթարանի սաների թիվը՝ 1250: Գործող ՆՈՒՀ –երի թիվը՝ 65, երեխաների թիվը՝ 5819:

2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Կազմակերպվել և վերահսկվել են ՀՀ Արմավիրի մարզպետի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից 2022-2023, 2023-2024 ուսումնական

տարիներին մարզի դպրոցների աշակերտների և դասարանների փաստացի տվյալների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ» (ԴԿՏՀ) մուտքագրման և անհրաժեշտ փոփոխություններ կատարելու աշխատանքները:

- Կազմվել և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2023-2024, 2024-2025 և 2025-2026 ուսումնական տարիների աշակերտների թվի կանխատեսումը:
- 2023-2024 ուստարվա ընթացքում կրթության շարունակականության ապահովման նպատակով Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն բռնի տեղահանված երեխաներին ուսումնական գործընթացից դուրս չթողնելու նպատակով ցուցաբերվել է համապատասխան աջակցություն: 2023 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներում սովորում են Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված 1464 երեխաներ:
- Վերահսկողություն է իրականացվել մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում 2023թ. հունվար և հունիս ամիսներին անցկացված պետական ավարտական քննությունների նկատմամբ:
- «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքով մարզպետին վերապահված լիազորությունների շրջանակում մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատություններից 13-ում իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ:
- Մշտադիտարկման ընթացքում դպրոցների տարբեր դասարաններում տրվել են նաև գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից՝ մարզում նշված առարկաների ուսուցման որակի վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն ունենալու նպատակով:
- 2023թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից այցելություններ են իրականացվել ՀՀ Արմավիրի մարզի այն նախադպրոցական հաստատություններ, որտեղ 2020-2023 թվականների ընթացքում տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացվել են նոր շենքի կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ: Այցելություն է կատարվել Արաքս, Բաղրամյան, Մեծամոր և Վաղարշապատ համայնքների 11 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից այցելությունները կլինեն շարունակական:
- 2023թ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացվել են մշտադիտարկումներ /107 դպրոցներում/՝ ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի պահանջները, կրթության բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ:
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. օգոստոսի 7-ի N 103-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի պահանջն ապահովելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող, մինչև 100 սովորող ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություններից հավաքագրվել է տեղեկատվություն՝ մինչև 1,0 դրույք ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցիչների՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ծանրաբեռնվածության վերաբերյալ:
- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. օգոստոսի 16-ի N 108-Ն և 2023թ. հոկտեմբերի 10-ի N 130-Ն հրամաններով հաստատված կարգի պահանջներին համապատասխան կազմվել է ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկական առարկաների)

դասավանդող ուսուցիչների՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հավելավճար ստացող ուսուցիչների ցուցակը:

- 2023թ. Արմավիրի մարզից Գնահատման և թեստավորման կենտրոնի dimord.am կայքում դիմում-հայտ է լրացրել 987 դիմորդ, ընդունվել է 729 դիմորդ (75,7%):
- ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 111 ուսումնական հաստատությունների՝ 2023թ. պարտադիր ատեստավորում է անցել 688 ուսուցիչ:
- 2023թ. մարզի 235 ուսուցիչներ հաղթահարել են կամավոր ատեստավորման շեմը և ընդգրկվել հավելավճարների տրամադման ծրագրում.
- 90-100տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, հավելավճար տրվում է աշխատավարձի 50 տոկոսի չափով – 12 ուսուցիչ.
- 80-89տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, հավելավճար տրվում է աշխատավարձի 40 տոկոսի չափով – 53 ուսուցչի.
- 70-79տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, հավելավճար տրվում է աշխատավարձի 30 տոկոսի չափով – 87 ուսուցչի.
- 60-69տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, աշխատավարձի դրույքաչափի փոփոխություն/200 000 ՀՀ դրամ/, առանց հավելավճարի – 83 ուսուցիչ.
- 0-59տոկոս արդյունքի դեպքում ուսուցիչը ենթակա է վերաատեստավորման՝ մեկ տարվա ընթացքում:
- Նոր ՀՊՉ վերապատրաստումների շրջանակում /2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններ/ ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից վերապատրաստվել են ուսումնական հաստատությունների տնօրեններ, տնօրենի տեղակալներ և ուսուցիչներ:
- 2022-2023 ուսումնական տարվա օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցած 4748 աշակերտից մարզային փուլին երաշխավորվել և մասնակցել է 609 աշակերտ: Մարզային փուլի՝ 609 մասնակցից հանրապետական փուլին երաշխավորվել է մասնակցել 78 աշակերտ: 2022-2023 ուսումնական տարվա անցկացված հանրապետական փուլի արդյունքներով Արմավիրի մարզի աշակերտներն ունեն՝ 3 հատ 1-ին կարգի, 5 հատ 2-րդ կարգի և 5 հատ 3-րդ կարգի դիպլոմ, ևս 9 հատ գովասանագիր:
- 2023թվականին ՀՀ Արմավիրի մարզի 12-րդ դասարանի աշակերտները մասնակցել են ԵՊՀ կողմից կազմակերպված օլիմպիադային: Նրանցից 20-ը հաղթող են ճանաչվել: 3-ը արժանացել են 3-րդ կարգի դիպլոմի, ևս 17-ը՝ գովասանագրի:
- 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում տարրական դասարանների աշակերտներին բաշխվել է 93868 հատ դասագիրք՝ տպագրված պետական բյուջեով:
- ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 25-ի թիվ 1079-Ն որոշմամբ սահմանված կարգով թվով 5 դպրոցների անշարժ գույքը հանձնվել է ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինմանը:
- 2022-2023 ուսումնական տարվանից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններն անցել են «Կայուն դպրցական սնունդ» ծրագրին, որը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, իրականացվել է դպրոցների ճաշարանների վերանորոգման կարիքների ուսումնասիրություն, գույքագրվել են առկա խնդիրները: Մարզպետի աշկատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներից 88 դպրոց տրամադրում է տաք սնունդ, իսկ 23-ը չոր սնունդ, որից 8-ում իրականացվում են տաք սննդի անցնելու ուղղությամբ համապատասխան աշխատանքներ, 8 դպրոցում չկա տարածք, քննարկվում են մոդուլային ճաշարանների կառուցման տարբերակներ, իսկ 7-ն ընդգրկված են դպրոցաշինական ծրագրում:

- Կազմակերպվել են մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ պետական ուսումնական հաստատությունները մանկավարժական կադրերով ապահովելու աշխատանքները, այդ թվում՝ ամիսը 1 անգամ կազմակերպվել է մարզի ուսումնական հաստատություններում առկա թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության հավաքումը, ամփոփումը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելը, ինչպես նաև մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում հրապարակելը:
- 2023թ. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության նպատակով մշակվել է kadrer.emis.am հարթակը, որտեղ այս պահին հասանելի է ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցներում առկա ուսուցչի թափուր աշխատատեղերը:
- Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներում դեկտեմբերի 25-ի դրությամբ ԼՂ-ից բռնի տեղահանված 48 ուսուցիչ է աշխատում /27-ը գործուղված, 2-ը ընդհանուր հիմունքներով, 19-ը ժամանակավոր/: Ինչպես նաև այլ հաստիքներ՝ վարչատնտեսական համակարգող -1, ուսուցչի օգնական -9, հոգեբան -1, լաբորանտ -8, հավաքարար -10, բանվոր -2, գործավար -1, դաստիարակի օգնական -2, տնտեսվար -1, էլ. կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ -1, պահակ -2, ԴԱԿ -1:
- Վերահսկողություն է իրականացվել հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվող ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթների անցկացման նկատմամբ:
- Նախապատրաստվել են ՀՀ Արմավիրի մարզպետի որոշումներ՝ դպրոցներում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքներ կազմակերպելու վերաբերյալ, մարզի 8 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են դպրոցների փաստաթղթերի և կնիքի հանձնման-ընդունման աշխատանքներ:
- ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 5-ի N 823-Ն որոշման համաձայն «Մոդուլային տիպի մանկապարտեզների շենքային ապահովում» միջոցառման շրջանակներում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզներ են կառուցվում Այգեվան, Լենուղի, Գետաշեն, Նորավան և Փշատավան համայնքներում: Արևիկ համայնքում մոդուլային տիպի մանկապարտեզի կառուցման աշխատանքներն ավարտական փուլում են:
- Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթածրագրի շրջանակներում ստեղծվել են 9 նոր նախակրթարան՝ Մյասնիկյան, Բերքաշատ, Զարթոնք, Տարոնիկ, Ակնաշեն, Մուսալեռ, Արմավիր /Արմավիր 10/, Դալարիկ, Երվանդաշատ բնակավայրերում:
- ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև իրականացվող դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում ընթանում են Փարաքարի և Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոցների կառուցման աշխատանքները: Արգինայի և Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոցները կառուցվել և հանձնվել են շահագործման: Ջրարբիի միջնակարգ դպրոցում ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև իրականացվող դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է դպրոցական նոր շենքերի կառուցում:
- ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի թիվ 914-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներին համապատասխան ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 6 հանրակրթական դպրոցների շենքերից վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե:

- 2023թ. նոյեմբերի 7-ին և 8-ին Արմավիրի ուսումնական զորամասում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող ավագ դպրոցների 11-րդ դասարանների աշակերտների, նախնական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2-րդ կուրսերի սովորողների մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են ռազմադաշտային պարապմունքներ (հրաձգություն մարտական փամփուշտներով): Նշված պարապմունքներին մասնակցել է 1250 սովորող:
- Դեկտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ կառավարության 18.11.2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի «Պաշտպանության նախարարություն» բաժնի 12.2-րդ կետով ՀՀ զինված ուժերի սպայական և ենթասպայական հաստիքները որակյալ կադրերով համալրելու նպատակով՝ մարզի ավարտական դասարանների աշակերտների շրջանում կազմակերպվել է հանդիպումներ ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի» բարձրաստիճան սպաների հետ: 2023-2024 ուսումնական տարում 7 սովորողներ ընդունվել են ՀՀ բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններ:
- «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի շրջանակում մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 87 հանրակրթական դպրոցներում հիմնվել և վերազինվել են նոր լաբորատորիաներ, ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումներով և գույքով, ինչպես նաև անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով:
- Իրականացվել են մարզի ուսումնական հաստատությունների տարիֆիկացիոն ցուցակների ստուգման և հաստատման աշխատանքները:
- Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 9 դպրոցի մարզադահլիճներ հիմնանորոգվում են (Ջանֆիդա, Արտիմետ, Արագած, Շահումյան, Սարդարապատ, Փշատավան բնակավայրերի միջնակարգ և Արմավիրի թիվ 6, Արմավիրի թիվ 8, Վաղարշապատի թիվ 7 հիմնական դպրոցներ): Շինարարական, ինչպես նաև նոր գույքի ստացման աշխատանքները ավարտական փուլում են:
- ՀՀ կառավարության 18. 08. 2021թ. N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնի՝ մինչև 2026թ. կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների և 500 մանկապարտեզների ծրագրի՝ ՀՀ մարզերում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակում մարզի 12 դպրոցներ վերակառուցվելու են:
- Շարունակվել է համագործակցությունը Ռուսաստանի, Չեխիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Բելառուսի և ԱՄՆ դեսպանությունների հետ, ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀԱԱՀ, Ֆրանսիական համալսարանի և այլ բուհերի, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ («ԲԱՐՁՈՒՆՔ-5165» հայ-ֆրանսիական բարեգործական ՀԿ, ՔՈԱՖ, «ԱՄՔՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ», ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), «Դասավանդի՛ր, Հայաստան», «Հայ դպրոց», «Հայ կրթական հիմնարկություն» և այլն):
- «Դոմ Մոսկվի» Երևանում մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի, Ռուսական տունը, Ռուսաց գրքի տունը ՀՀ-ում և ԼԻՎԵՐ ընկերության հետ: «Ռուսական գրքի տունը Երևանում», համագործակցելով «Լիվըր» ընկերության հետ, ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ կազմակերպել է գեղարվեստական թարգմանության մրցույթ՝ նվիրված Վալերի Բրյուսովի 150-ամյա հոբելյանին: Հաղթող է ճանաչվել Մեծամորի N 1 հիմնական դպրոցի աշակերտ Հայկ Իսախանյանը՝

ստանալով գլխավոր մրցանակը 1,000,000 դրամ կամ կրթաթոշակ Հայաստանի և Ռուսաստանի ցանկացած բուհում սովորելու: Մեծամորի N 1 հիմնական դպրոցը ստացել է հատուկ մրցանակ՝ առաջին անհրաժեշտության խնդրի լուծում:

- Մարզի դպրոցներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել և հաջողությունների հասել «Մեղու» և «Կենգուրու» միջազգային մրցույթներում: Կազմակերպվել է ամենամյա աբովյանագիտական մարզային օլիմպիադա, ինչպես նաև ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցության /AESA- ի/ ամենամյա գիտական օլիմպիադա:

Մշակույթ և սպորտ

- «Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակներում մարզի 12 երաժշտական և արվեստի դպրոցների 82 աշակերտների ՀՀ պետական բյուջեով հատկացվել է փոխհատուցում 17.866.500 ՀՀ դրամ:
- ԿԳՄՍՆ «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում Արմավիրի մարզի և Երևան քաղաքի արվեստի և երաժշտական դպրոցների աշակերտների համատեղ համերգների և ցուցահանդեսների կազմակերպում:
- Հունվար-փետրվար ամիսներին կազմակերպվել են «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի համայնքային և մարզային փուլերը և 12 լավագույն թենիսիստներ ապրիլի 1-2-ը մասնակցել են Չարենցավանում անցկացված հանրապետական եզրափակիչ փուլին:
- Հունվարի 27-29-ը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի թիմը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված պետական մարմինների աշխատակիցների միջև անցկացվող հրաձգության մրցումներին:
- Մարտ ամսին մարզի հանրակրթական դպրոցներին բաժանվել է դպրոցական բաժանորդային համակարգի աբոնեմենտներ:
- Ապրիլի 26-28-ը մարզի հանրակրթական դպրոցներում ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ կազմակերպվել է «Քո արվեստը դպրոցում» մշակութային ծրագիրը՝ հայտնի արվեստագետների մասնակցությամբ, որին մասնակցել է 55 դպրոցների 576 աշակերտ:
- Ապրիլի 28-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Դասարվեստ» կրթամշակութային ծրագրով մարզի 3 դպրոցներում կազմակերպվել է Հայաստանի ազգային պատկերասրահի լավագույն կերպարվեստի ցուցանմուշների ցուցադրություն:
- Ապրիլ-նոյեմբեր ամիսներին հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների Սպարտակիադա 8 մարզաձևերից:
- Փետրվար-ապրիլ ամիսներին կազմակերպվել է հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը:
- Ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել է «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային փուլը, որին մասնակցել են 30 հանրակրթական դպրոցների թիմեր՝ 210 մասնակից:
- Ապրիլի 29-ին մարզի քաղաքային համայնքներում կազմակերպվել են «Քաղաքացու օրվան» նվիրված միջոցառումներ:
- Մայիսի 28-ին ապահովվել է մարզի 12 հեծանվորդների մասնակցությունը Շորժայում կայացած «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարին:
- Հունիսի 30-ից հուլիսի 21-ը կազմակերպվել և անցկացվել է ՀՀ Արմավիրի մարզի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների միջև ֆուտբոլի առաջնություն՝ 20 թիմերի մասնակցությամբ:

- Հուլիսի 5-ին ապահովվել է 200 աշակերտների մասնակցությունը Երևանում կայացած ՀՀ պետական դրոշի և խորհրդանշանների օրվան նվիրված միջոցառմանը:
- Ապահովվել է մարզի 6 համայնքների թիմերի և մարզիկների մասնակցությունը օգոստոսի 5-19-ը կայացած Համահայկական ամառային 8-րդ խաղերին:
- Օգոստոսի 19-ին մարզի լողորդները մասնակցել են «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարին:
- ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում 2023թ. սեպտեմբերի 9-ին անցկացված «Մշակութային վերածնունդ» արվեստների և արհեստների փառատոնին ներկայացվել են մարզի 6 համայնքների տաղավարներ՝ մշակույթի, արվեստի գործերի ցուցադրությամբ, ինչպես նաև երգի-պարի համույթների ելույթներ:
- Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել են նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի դպրոցական, տարածաշրջանային և մարզային փուլերը:
- Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՖՖ–ի հետ համատեղ կազմակերպվել են ֆուտբոլի դպրոցական առաջնության տարածքային և մարզային փուլերը, որին մասնակցել է 43 թիմ:
- Նոյեմբերի 4-ին ապահովվել է մարզի շուրջ 730 վազորդների մասնակցությունը «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղային կրոսավազքի սիրողական մրցաշարին:
- Դեկտեմբերի 6-7-ը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի թիմը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված պետական մարմինների աշխատակիցների միջև անցկացվող «Բուրգ» բիլիարդի առաջնությանը:

Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցեր

Առողջապահության բնագավառ. Մարզի առողջապահական համակարգում գործում են 56 բուհաստատություններ՝ 52 համայնքային, 4 մարզպետի աշխատակազմի ենթակայության: Առողջապահական համակարգում աշխատում են՝ 430 բժիշկներ և 743 միջին բուժանձնակազմ: Մեկ բժիշկը միջինում սպասարկում է 710 բնակչի: Մարզի բուժհաստատությունների մահճակալների թիվը 365 է:

Մարզպետի աշխատակազմի ենթակայության 4 բուժհաստատությունների գլոբալ բյուջեն 2023թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 3.789.403.3 հազ. ՀՀ դրամ: 2022թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 2.505.740.6 հազ. ՀՀ դրամ:

2022թ. վճարովի ծառայությունները կազմել են 658.588.1 հազ. ՀՀ դրամ մինչդեռ 2023թ. ՝ 896.420.305 հազար ՀՀ դրամ:

2023թ.մարզում գրանցվել է 1372 ծնունդ, որից՝ 618 աղջիկ, 763 տղա /ներառյալ զույգեր/:

2023թ. կենտրոնացված գնմամբ և մարդասիրական ճանապարհով տարբեր հիվանդությունների բուժման նպատակով ստացվել և բուժհաստատություններին են բաշխվել 122.057.886 հազ. ՀՀ դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ, որից 98.668.983 հազ. ՀՀ դրամ արժողությամբ հակադիաբետիկ դեղորայք:

2023թ. մարզի ԱԱՊ օղակում հաշվառված են եղել 11053 դիաբետով հիվանդներ:

2023թ. մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական հիմնարկներում աշխատավարձի պարտքեր չեն ձևավորվել:

Արմավիր ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վերակառուցման աշխատանքները մոտենում են ավարտին: ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ջանքերով և ՀՀ պետական բյուջեի միջոցներով ամբողջությամբ վերանորոգվում և վերազինվում է Էջմիածնի ԲԿ ՓԲԸ-ը: ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ջանքերով և ՀՀ պետական բյուջեի միջոցներով Էջմիածնի ԲԿ–ի համար ձեռք է բերվել ընդհանուր անզգայացման սարք, դեֆիբիլյատոր և ճկուն էնդոսկոպիկ համակարգ ընդհանուր 32.480

հազ. ՀՀ դրամ արժողությամբ, Արմավիր ԲԿ–ի համար ձեռք է բերվել ավտոկլավ, կենսաքիմիական վերլուծիչ, ախտորոշման գերձայնային ուլտրաձայնային և դոպլեր սարք, ռենտգեն սարք, էնդոսկոպ և ավտոմատ արյունաբանական վերլուծիչ, ընդհանուր 45.636.4 հազ. ՀՀ դրամ արժողությամբ, Հիսուսի մանուկներ Ակ-ի համար ձեռք է բերվել ավտոռեֆրակտոմետր 7.600 հազ. ՀՀ դրամ արժողությամբ:

Մարզպետի աշխատակազմի ջանքերով պարբերաբար իրականացվում են սկրինինգային ծրագրեր, որի շրջանակներում մարզի բուժհաստատություններ են եկել մի շարք բժիշկներ, արդյունքում պացիենտներին տրամադրվել է անվճար խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացվել են մի շարք հետազոտություններ:

Նախատեսվում է առաջիկա տարվա ընթացքում վերանորոգել Արմավիր ԲԿ-ի պոլիկլինիկայի մասնաշենքը: Աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, որն ունենալու է իր դրական ազդեցությունը մարզի բժշկական կազմակերպութնունների որակյալ ծառայությունների մատուցման համար:

Սոցիալական պաշտպանության բնագավառ. Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Արմավիրի մարզի միասնական սոցիալական ծառայության 3 տարածքային կենտրոններում իրականացվել են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքները:

2024թ. հունվարի 1-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 6034 է, որոնցից նպաստառու են 5004-ը (այդ թվում՝, ընտանեկան նպաստ՝ 3766 ընտանիք, սոցիալական նպաստ՝ 1238 ընտանիք), հրատապ դրամական օգնություն է ստացել 1021 ընտանիք:

հ/հ	Բովանդա-կություն	Ընտանիքների թիվը ըստ ՄՍԾ-ների/2022թ./			Ընդամենը /2022թ./	Ընտանիքների թիվը ըստ ՄՍԾ-ների/2023թ./			Ընդամենը /2023թ./
		Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան		Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան	
1.	ընդամենը փաստագրված	2875	3229	720	**6824**	2620	2862	552	**6034**
2.	ընտանեկան նպաստ ստացող	1628	2021	461	**4110**	1666	1731	369	**3766**
3.	սոցիալական նպաստ ստացող	452	572	95	**1119**	524	630	84	**1238**
4.	Եռամսյակային հրատապ դրամական օգնություն ստացող	416	588	138	**1142**	470	433	118	**1021**

2024թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 7028 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 4729-ը: Գործակալություններում հաշվառված աշխատանք փնտրող անձանցից աշխատանքի է տեղավորվել 651 մարդ:

Արմավիրի միասնական սոցիալական ծառայություններում հաշվառված են 47943 կենսաթոշակառուներ, այդ թվում՝ ըստ տարածքների՝

- Արմավիր - 20568 մարդ
- Վաղարշապատ - 24395 մարդ
- Բաղրամյան - 2980 մարդ:

ՀՀ Արմավիրի «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2023թ. ընթացքում դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով 767 ընտանիքների՝ 28,490.0 հազ. դրամ գումարի չափով:

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշմամբ հաստատված «Զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու» կարգի և ՀՀ կառավարության 10.08.2017թ. «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը հաստատելու, հաշվառման վերցնելու և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 1016-Ն որոշման համաձայն Արմավիրի մարզպետի աշխատակազմում հաշվառված է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշմանդամ դարձած 120 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք: Վերոնշյալ որոշմամբ սահմանված կարգի համաձայն 2023թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում հաշվառվել է զոհված զինծառայողի 8 ընտանիք և հաշմանդամ դարձած զինծառայողի 1 ընտանիք, որոնք համայնքների ղեկավարների որոշմամբ ճանաչվել են բնակարանի կարիքավոր:

2023թ. ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 3 զինհաշմանդամի ընտանիք ստացել է բնակարանի գնման վկայագիր:

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրով ՀՀ Արմավիրի մարզում իրականացվել է «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագիրը՝ ՀՀ կառավարության 17.04.2014 N 534-Ն որոշմամբ հաստատված N 19 հավելվածով սահմանված կարգով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2023թ. փետրվարի 13-ի N 37-Ա/1 հրամանով հաստատված ծրագրի տեղաբաշխման համաձայն 2023թ. ՀՀ Արմավիրի մարզին հատկացվող ֆինանսական միջոցների չափը կազմել է 57,535.5 հազ. ՀՀ դրամ՝ 228 ծրագրի համար (Արմավիր՝ 22,459.0հազ. ՀՀ դրամ, 89 ծրագիր, Բաղրամյան՝ 17,412.0հազ. ՀՀ դրամ, 69 ծրագիր, Վաղարշապատ՝ 17,664.4 հազ. ՀՀ դրամ, 70 ծրագիր):

Հաստատված կարգի համաձայն ՀՀ Արմավիրի մարզի համայնքներից հավաքագրվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել 764 հնարավոր շահառուների տվյալներ: Արդյունքում՝ մարզի 3 միասնական սոցիալական ծառայություններում իրականացվել է 251 ծրագիր /Արմավիր՝ 99 ծրագիր, Վաղարշապատ՝ 74 ծրագիր, Բաղրամյան՝ 78 ծրագիր/:

2022թ. մարտի 10-ին ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 283-Ն որոշումը, որով կարգավորվում է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովության ծրագրի իրականացումը ՀՀ մարզերում: Միգրացիոն ծառայության և մարզպետի աշխատակազմի կողմից 2022թ. գարնանից սկսվել է մարզերում բնակվող հավակնորդ շահառուների վերահաշվառման գործընթացը, որի արդյունքում ՀՀ Արմավիրի մարզում վերոնշյալ ծրագրի շահառու է ճանաչվել 15 ընտանիք: Շահառու ճանաչված ընտանիքների դիմումները ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից 2022թ. դեկտեմբեր ամսին ներկայացվել են ՀՀ միգրացիոն ծառայություն՝ վերջիններիս բնակարանի գնման վկայագիր տրամադրելու համար: 2023թ.օգոստոս ամսին վերոնշյալ ընտանիքներից 13-ին/2 ընտանիք հրաժարվել է/ տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն. Կազմակերպվել և իրականացվել են աշխատանքներ՝ ընտանեկան բռնության 41 դեպքերի հաշվառման և հետագա

մասնագիտական շարունակական աշխատանքի և միջգերատեսչական համագործակցության ապահովման ուղղությամբ:

Իրականացվել է սոցիալապես անապահով 1405 ընտանիքների կարիքների գնահատում և տրամադրվել է աջակցության անհրաժեշտության վերաբերյալ եզրակացություններ:

Մարզում համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին տարվա ընթացքում պարբերաբար տրամադրվել են մեթոդական ուղեցույցեր:

Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման ուղղված աշխատակազմի մասնագետների, համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձաժողովների, ոստիկանության համապատասխան աշխատակիցների հետ կազմակերպվել են տուն-այցեր, մարզում բնակվող սոցիալապես անապահով այն ընտանիքներ, որտեղ առկա են անչափահասների հետ կապված լուրջ խնդիրներ: Խնդիրների լուծման նպատակով տարվել են մասնագիտական աշխատանքներ, ցուցաբերվել նյութական աջակցություն, ծնողների հետ տարվել են բացատրական աշխատանքներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ անցկացվել են հանդիպում-քննարկումներ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնահարցերի առնչությամբ: Համատեղ աշխատանքների արդյունքում ձեռնարկվել են հնարավոր բոլոր միջոցները պարտադիր ուսուցումից դուրս մնացած 54 աշակերտներին ուսումնական պրոցեսում ընդգրկելու նպատակով:

Մարզում իրականացվել են ընտանեկան բռնության կանխարգելման, կանանց և երեխաների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ սեմինարներ: Ապահովվել է մասնակցությունը ինչպես մարզում, այնպես էլ մարզից դուրս երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային կառույցների կողմից կազմակերպված սեմինար-խորհրդակցությունների, քննարկումների: Ապահովվել է «Մարդու իրավունքներ եզդիական կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հետ համագործակցությունը:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից ստացված վարչության ենթակա ՆԳ բաժինների ԱԳԲ և ԸԲԿ-ում հաշվառման մեջ գտնվող և փաստացիորեն հայտնի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող, անչափահաս երեխաների վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանց շրջանում համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով: Իրականացված աշխատանքների արդյունքում 3 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 3 անչափահասների վարքագծի նկատմամբ իրականացվել է հսկողություն:

Սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխաների անձնական գործերը ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ կենտրոնացված հաշվառման:

ՀՀ Արմավիրի մարզի բնակիչ հանդիսացող 7 քաղաքացիներ հաշվառվել են, որպես որդեգրել ցանկացող անձինք և ներկայացվել են ՀՀ ԱՍՀՆ կենտրոնացված հաշվառման:

Խնամատար ընտանիքում տեղավորված 3 երեխաների ընտանիքների նկատմամբ իրականացվել է մշտադիտարկում և նրանց հետ կնքված պայմանագրերը երկարացվել են, ինչպես նաև կնքվել նոր խնամատարություն իրականացնող ընտանիքի հետ նոր պայմանագիր:

Առանց ծնողական խնամքի մնացած 1 երեխա տեղափոխվել է Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ: Փաստացի առանց ծնողական խնամքի մնացած 6 անչափահաս երեխաներ տեղավորվել են «Շիրակի մարզի երեխաների աջակցության կենտրոն» առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա տեղավորվել են «Զատիկ երեխաների աջակցության» կենտրոն: Ապահովվել է մասնակցությունը 13 դատական նիստերի, որտեղ անհրաժեշտություն է առաջացել որպես երրորդ անձ հանդես գալու և երեխայի կարծիքը լսելու գործընթացում:

Մարզում կազմակերպվել և աջակցվել են երեխաներին նվիրված և նրանց հիմնախնդիրների քննարկմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել են սեպտեմբերի 19 Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ընդունման, կարիքների գնահատման և սկզբնական տեղավորման աշխատանքների կազմակերպման աշխատանքները:

Աջակցություն է ցուցաբերվել մարզում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ իրականացնել մարզային ծրագրեր:

Ապահովել է զոհված զինծառայողների ընտանիքներից 22 անձի մասնակցությունը ՀՀ վարչապետի տիկնոջ աշխատակազմի կողմից կազմակերպած միջոցառմանը:

Առավել խոցելի խմբերի դպրոցականների ամառային հանգստի կազմակերպումն ապահովելու նպատակով կազմակերպվել է մարզի շուրջ 200 երեխաների հանգստը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում և համագործակցելով Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան մասնաճյուղի հետ 20 ծնողազուրկ և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված ընտանիքների երեխաների հանգիստը՝ Հանքավանի «Արագած» ճամբարում:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, համայնքային ծառայության և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր. Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել են մարզպետի, մարզպետի տեղակալի և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի մոտ հրավիրված խորհրդակցությունները, ապահովվել համայնքների ղեկավարների և հրավիրված անձանց մասնակցությունը նշված խորհրդակցություններին:

Մշտական կապի մեջ լինելով մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ նրանց տրամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն իրենց սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով, ինչպես նաև վերահսկվել է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը:

Մեթոդական աջակցություն և խորհրդատվություն է տրամադրվել մարզի համայնքապետարանների աշխատակազմերին: Շարունակաբար հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքների ղեկավարների որոշումները սահմանված կարգով մարզպետարան ներկայացնելու նկատմամբ և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը, ինչպես նաև համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողքներին, առաջարկություններին, քաղաքացիների ընդունելություններին և նրանց կողմից բարձրացրած հարցերին օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու գործընթացներին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.11.2022թ. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 3245-Ա հրամանով սահմանված ժամանակացույցի և ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշումներով ստեղծված աշխատանքային խումբը 2023թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի՝ Մեծամոր, Փարաքար, Արաքս, Խոյ համայնքներում իրականացրել են իրավական հսկողության աշխատանքներ:

Համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների հայտարարությունները անմիջապես ուղարկվել է ՀՀ կառավարության պետական լիազորված մարմին և տեղադրվել մարզպետի աշխատակազմի կայք էջում: Յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը պետական լիազորված մարմին է ուղարկվել մարզում տվյալ ամսվա ընթացքում նշանակված մրցույթների

արդյունքները, ինչպես նաև համայնքային ծառայության մրցույթների անցկացման հաջորդ ամսվա ժամանակացույցը:

Ապահովվել է մասնակցությունը ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում համայնքային ծառայության ինչպես նաև ՀՈԱԿ-ների տնօրենների մրցույթային հանձնաժողովների աշխատանքերին: Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 119 մրցույթ: Կայացել է 98 մրցույթ, որոնց մասնակցել է 120 քաղաքացի, հաղթող է ճանաչվել 95 քաղաքացի, որոնք նշանակվել են համապատասխան պաշտոններում, ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարվել է 33 մրցույթ, կայացել է 28 մրցույթ, որոնց մասնակցել է 29 քաղաքացի, հաղթող է ճանաչվել 27 քաղաքացի:

2023թ. «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հետ համատեղ մարզպետի աշխատակազմի վարչական շենքում կազմակերպվել և անցկացվել են 160 համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման դասընթացներ՝ նախորդ տարվա 80 վերապատրաստվողների համեմատ: Վերապատրաստման վկայականներ են ստացել 159 համայնքային ծառայողներ: «Մաստեր Սթայլ» ՍՊԸ հետ համատեղ տեղական ինքնավարման մարմինների 50 վերապատրաստվողներից վկայականներ են ստացել 42 ավագանու անդամներ և 2 համայնքների ղեկավարներ:

ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով ապահովվել է մշտական համագործակցությունը համայնքների ղեկավարների տարածքային ընտրական հանձնաժողովների, ՀՀ ՆԳՆ նախարարության անձնագրային և վիզաների վարչության Արմավիրի, Վաղարշապատի, Մեծամորի և Բաղրամյանի բաժանմունքների հետ:

Ապահովվել է համագործակցությունը ՀՀ Արդարադատության նախարարության պրոբացիոն ծառայության, ինչպես նաև ՀՀ ՆԳՆ նախարարության փրկարար ծառայության ՀՀ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ: Կազմվել և ՀՀ ՆԳՆ նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» է ուղարկվել ՀՀ Արմավիրի մարզի կազմակերպությունների, մարզպետի աշխատակազմի, համայքապետարանների ներկայացուցիչների 2024թ. ունկնդիրների պլան-գրաֆիկը և մշտական հսկողություն է իրականացվել նրանց կողմից դասընթացների մասնակցությունը:

Ապահովվել է համագործակցությունը և աջակցությունը ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ տարածքային ստորաբաժանմանը: Ապահովվել է մասնակցությունը 2022թ. ձմեռային և 2023թ. ամառային զորակոչերի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:

Մշտապես ուշադրության կենտրոնում է պահվել մարզի երեք կազմակերպություններում այլընտրանքային ծառայություն կատարող անձանց աշխատանքային և կենցաղային պայմանների ապահովման և իրենց օրենքով սահմանված կարգով պարտականությունների կատարման ուղղությամբ: Այլընտրանքային ծառայության վերաբերյալ հավաքվել է տեղեկատվություն մարզի չորս համայնքներից և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան հանձնաժողովին: Մշտապես ապահովել է մարզի վարչական տարածքում տեղակայված զորամասերի, մարզի հանրապետական գործադիր մարմինների ստորաբաժանումների և համայնքների միչև կապը և փոխգործակցությունը:

Իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզի համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման նկատմամբ մշտադիտարկում: Համապատասխան տեղեկատվությունը սահմանված ձևաչափով երկամսյա պարբերականությամբ ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կազմում ապահովվել է մասնակցություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մարզի համայնքներում բնակություն հաստատած քաղաքացիների հաշվառման, տեղավորման և բազմաթիվ այլ խնդիրների լուծման աշխատանքներին:

Մարզի 4 քաղաքացիներից ստացվել են դիմումներ ՌԴ մուտքի թույլտվության արգելքը վերացնելու վերաբերյալ, որոնք ուղարկվել են ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, իսկ ստացված պատասխանների և պարզաբանումների մասին տեղեկացվել է դիմումատու քաղաքացիներին:

Զորահավաքային նախապատրաստություն: Կազմակերպվել և համակարգվել են մարզի և աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքները:

Համագործակցելով ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի տարածքային ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ապահովվել է զորահավաքային նախապատրաստության, զորահավաքային ռեսուրսների ուսումնասիրման, ճշգրտման աշխատանքներին օժանդակությունը: Տարվել է աշխատակազմի զինապարտ աշխատակիցների հաշվառում և ամրագրում: Սահմանված կարգով վարվել են առկա գրանցամատյանները: ՀՀ կառավարության որոշումների համաձայն կազմակերպվել են վարժական հավաքներում ընդգրկված մարզի զինապարտ քաղաքացիների ծանուցման աշխատանքները: Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի ընթացքում նախապատրաստել են մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերը և մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Մարզի համայնքների, վարչական ղեկավարների, դպրոցների տնօրենների, զինղեկների, ավագ դասարանների աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են հավաք խորհրդակցություններ «ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում դիմորդների գրավչության բարձրացման» թեմայով: ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մարզի 8 համայնքներում կազմակերպվել և անցկացվել են ՀՀ ԶՈՒ-երը և կանանց նորաստեղծ ստորաբաժանումը պայմանագրային զինծառայողներով համալրման աշխատանքներ և իրազեկման հանդիպումներ:

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ Արմավիրի ՄՓՎ) հետ համատեղ լրամշակվել հաստատման է ներկայացվել «ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության», «ՀՀ Արմավիրի մարզի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման», «ՀՀ Արմավիրի մարզի քաղաքացիական պաշտպանության» պլանները: Տարվա ընթացքում նախապատրաստվել և անցկացվել են հրամանատարաշտաբային, շտաբային ուսումնավարժանքներ, քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստությունից դասախոսություններ, պատսպարման վայրերի ուսումնասիրություններ և այլն: ՀՀ ներքին գործերի նախարարության հետ համաձայնեցվել և Մարզպետի որոշմամբ հաստատվել է «Բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հմնական միջոցառումների պլան»-ը:

Նախապատրաստվել և Մարզպետի հաստատմանն են ներկայացվել 11 որոշումներ, տարաբնույթ և տարաբովանդակ գրություններ՝ ուղղված մարզի համայնքապետարաններին, աշխատակազմի ենթակայության կազմակերպություններին, մարզում տեղակայված այլ կառույցներին: Մարզպետի և գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ իրականացվել է գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստում:

Բաղրամյան, Փարաքար, Արաքս և Խոյ համայնքներում անցկացված իրավական հսկողության աշխատանքների ընթացքում արձանագրված թերությունների և բացթողումների վերաբերյալ տրվել են համապատասխան ցուցումներ, իսկ փաստաթղթերի ձևակերպման առումով ցուցաբերվել է մեթոդական օգնություն:

Ապահովվել է համագործակցությունը համայնքապետարանների, ՀՀ ՆԳՆ Արմավիրի ՄՓՎ-ի, ՀՀ ՆԳՆ Արմավիրի մարզային ոստիկանության վարչության, մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների և մարզի տարածքում գործունեություն ծավալած այլ կառույցների հետ:

Ցուցաբերվել է մասնակցություն ՀՀ կառավարության, ՀՀ ներքին գործերի, պաշտպանության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների կողմից ուղարկված քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և պաշտպանության բնագավառում մի շարք ՀՀ օրենքների, կառավարության որոշումների նախագծերի քննարկումներին:

Զարգացման ծրագրերի մշակում և իրականացում

Սուբվենցիոն ծրագրեր. 2023թ. ընթացքում համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ուղղությամբ Արմավիրի մարզպետի աշխատակազմում աշխատանքներն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

- Նախորդ տարիների չավարտված և շարունակվող սուբվենցիոն ծրագրեր,
- 2023թ. սուբվենցիոն ծրագրեր՝ ներկայացված հայտերի լրամշակում, հաստատում, իրականացում և մշտադիտարկում,
- 2024թ. սուբվենցիոն ծրագրեր՝ նախնական հայտերի և տեխնիկական բնութագրերի ներկայացում, ամբողջական փաթեթների կազմում և հաստատման ներկայացում:

2022թ. համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հավանության են արժանացել ՀՀ Արմավիրի մարզի 41 սուբվենցիոն ծրագրեր՝ 147 ենթածրագրերով: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 9 մլրդ դրամ, որից՝

-կառավարության համաֆինանսավորումը՝ 5 մլրդ դրամ կամ 55,5%:
-համայնքի համաֆինանսավորումը՝ 4 մլրդ դրամ կամ 44. 4%:
-մասնավորի/բնակիչների ներդրումը՝ 64 մլն դրամ կամ 0.7%:

2022թ. հավանության արժանացած 2023թ. շարունակվող սուբվենցիոն ծրագրերի ընթացքը՝ 29.12.2023թ-ի դրությամբ

Ավարտված	113	15 ծրագրի 60 ենթածրագրի շին. աշխատանքներն ավարտվել են 2022թ-ին
Ավարտական փուլում գտնվող	1	
Սկսված և ընթացքի մեջ գտնվող	10	
Չսկսված Ընդամենը - 41 ծրագիր	23 147	ենթածրագիր

2023 թվականի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հավանության են արժանացել ՀՀ Արմավիրի մարզի 31 սուբվենցիոն ծրագրեր՝ 150 ենթածրագրերով: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 12.92 մլրդ դրամ, որից՝

-կառավարության համաֆինանսավորումը՝ 7.12 մլրդ դրամ կամ 55.1%
-համայնքի համաֆինանսավորումը՝ 5.78 մլրդ դրամ կամ 44.7%
-մասնավորի/բնակիչների ներդրումը՝ 9.98 մլն դրամ կամ 0.1%:

2023թ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերի ընթացքը՝
29.12.2023թ-ի դրությամբ

Ավարտված	57, որից 41 ծրագիր - շինարարության և ֆինանսական մասով
Ավարտական փուլում գտնվող	3
Սկսված և ընթացքի մեջ գտնվող	12
Չսկսված	75
Ցանկից հանված	4
Ընդամենը - 31 ծրագիր	147 ենթածրագիր

2023թ. ընթացքում ՀՀ կառավարության 12 որոշումներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին սուբվենցիոն ծրագրերի պետական բյուջեի հատկացումը կազմում է ընդամենը 2,606,287,500 ՀՀ դրամ (7 միավորված համայնքների 63 բնակավայրերի 118 ենթածրագրերի համար): Ցուցանիշը գերազանցում է 2022թ. ցուցանիշը՝ 1 մլրդ 138 մլն դրամով:

Համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա 2023թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ կատարվել է պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ 2,603,296,314 ՀՀ դրամ, որը ավել է 2022թ. ցուցանիշից՝ 1,237,547,811 ՀՀ դրամով կամ 90. 6%-ով:

2024 թվականի սուբվենցիաներ ստանալու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 7 համայնքների 42 սուբվենցիոն ծրագրերի (153 ենթածրագրերով) նախնական հայտեր և տեխնիկական բնութագրեր:

Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 9. 62 մլրդ դրամ, որից՝

- պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է շուրջ 4. 63 մլրդ դրամ,
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ շուրջ 4. 97 մլրդ դրամ,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ 13. 13 մլն դրամ:

19. 01. 2024թ. դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 35 ծրագրի ամբողջական փաթեթ 10,17 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որը ներկայացվել է մարզի 7 միավորված համայնքների կողմից և վերաբերում է 57 բնակավայրերին՝ 134 ենթածրագրերով, որից՝

- պետական բյուջեի մասնաբաժինը՝ 4. 77 մլրդ ՀՀ դրամ,
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ 5. 37 մլրդ ՀՀ դրամ,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ 21. 76 մլն ՀՀ դրամ:

Ներդրումներ. 27.01.2023թ. մարզպետը ներկա է գտնվել «Այ էս ԷՍ ԴԻ» «Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող և ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության աջակցությամբ Մարդկային Անվտանգության "Grassroots" դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող «Արմավիր քաղաքում թափոնների կառավարման կարողությունների ուժեղացում և վերամշակման խթանում» ծրագրի փակման արարողությանը:

03.03.2023թ. Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրում բացվել է Արդշինբանկի նոր «Սարդարապատ» մասնաճյուղը:

07.03.2023թ. Արմավիրի մարզպետի մոտ քննարկվել է մարզում «Թումո» կենտրոնների հիմնման և նոր տուփերի բացման ծրագրի իրականացման հարցերը՝ «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի գործարկման ղեկավարի մասնակցությամբ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է

2023-2025 թվականների ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի երկու քաղաքներում (Էջմիածին և Արմավիր) կառուցել Թումո կենտրոններ և այդ կենտրոններին վեց Թումո տուփեր: Առաջարկվել է մարզում երեք կենտրոն (Արմավիր, Վաղարշապատ և Մեծամոր քաղաքներում) և 7 տուփ ունենալու հանգամանքը: Կողմերը պայմանավորվել են առաջիկայում հստակեցնել «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տուփերի տեղադրման վայրերը և քայլ առ քայլ իրականացնել հաստատված ծրագիրը:

Թումո կենտրոն Վաղարշապատ - նախատեսված 2618 ուսանողի համար, կենտրոնին կցված են լինելու հետևյալ բնակավայրի տուփերը: Այս կտորի նախնական ժամկետը 2026 թվականն է՝

1. Մուսալեռ - 429 ուսանող
2. Արագած - 270 ուսանող
3. Գայի - 261 ուսանող

Թումո կենտրոն Արմավիր - նախատեսված 2124 ուսանողի համար, կենտրոնին կցված են լինելու հետևյալ բնակավայրի տուփերը՝

1. Արմավիր գյուղ - 430 ուսանող – ժամկետ՝ 2025թ. հունվար
2. Մեծամոր քաղաք - 800 ուսանող - նախատեսվում է 2 տուփ - ժամկետ՝ 2025թ. փետրվար
3. Դալարիկ - 410 ուսանող - ժամկետ՝ 2025թ. մարտ:

Արմավիրի կենտրոնի աշխատանքները սկսված են, այս պահին կատարվում է պրոյեկտի ճարտարապետական նախագիծը:

09.03.2023թ. ՀՀ Արմավիրի մարզպետը և «Սմարթ Բելլի Արմենիա» նախագծի հիմնադիր Մեցո Իգիթյանը ստորագրել են ռազմավարական գործընկերության հուշագիր՝ հայկական ինովացիոն հովիտ նախագծի իրականացման համար: Հայաստանում իր հայեցակարգով առաջինը համարվող հովիտը կտեղակայվի Երևանի և Էջմիածնի միջև: Investico ընկերության կառավարիչ գործընկեր Վյաչեսլավ Ղազարյանը Marriott International հյուրանոցային ցանցը ներկայացնող Synergy Comfort Hotels-ի հետ համաձայնագիր է կնքել VILLAGIO նախագիծը սկսելու մասին, որը հովտի չորս բնակելի թաղամասերից առաջինը կլինի: VILLAGIO ակումբային թաղամասի շինարարությունը նախատեսվում է ավարտել 2025թ., իսկ Smart Valley Armenia նորարարական հովտի նախագծի իրականացման ընդհանուր ժամկետը, որը ներառում է գրասենյակային համալիրներ, կլաստերներ, լաբորատորիաներ, Արվեստի տուն, Գիտության և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտ, նախատեսված է մինչև 2028թ.:

29.04.2023թ. մարզպետը Փարաքար համայնքում մասնակցել է «Նշան և Աիդա Կարայանների անվան Արհեստների, Արվեստների և Տեխնոլոգիաների կենտրոնի» հիմնարկեքի հանդիսավոր արարողությանը: Դպրոցի գլխավոր առաքելությունը լինելու է միջմարզային համագործակցությունն ու երիտասարդների համախմբումը: Այստեղ հանգստյան օրերին մենթորների օժանդակությամբ տեխնոլոգիական արտադրանքներ են ստեղծելու Հայաստանի բոլոր մարզերից աշակերտները:

20.05.2023թ. մարզպետը մասնակցել է Արմավիր քաղաքում անցկացված քաղաքային տոնավաճառին: Բազմամարդ տոնավաճառին մասնակցել են Արմավիրի մարզի համայնքների ղեկավարները, գործարարները և մեծաթիվ արմավիրցիներ: Մարզմարկետ տոնավաճառին ներկայացված էին մարզի շուրջ 50 փոքր բիզնեսների տաղավարներ: Սննդամթերքի արտադրության՝ մասնավորապես, կաթնամթերքի, հացաբուլկեղենի, մսամթերքի, ջերմոցային տնտեսության, չրագործության, ինչպես նաև կահույքագործության, կարի ու գեղեցկության սրահների ոլորտները՝ մեկ վայրում: Այցելուները հնարավորություն ունեցան ծանոթանալու տեղի ընտանեկան բիզնեսների արտադրանքին, կատարել մատչելի գնումներ անմիջապես արտադրողից և տեղում համտեսել արտադրանքը: Տոնավաճառը կազմակերպել էր Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան՝ «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանում» ծրագրի շրջանակում՝ ՀՀ Արմավիրիր մարզպետի աշխատակազմի, ՀՀ

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Միասնական սոցիալական ծառայության հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվել է Ճապոնիայի կառավարության ֆինանսավորմամբ (Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի միջոցով)՝ Համաշխարհային բանկի համակարգման ներքո:

03.05.2023թ. մարզպետն այցելել է Արաքս համայնքի Առատաշեն բնակավայրում գործող Aratashen Winery հյուրատուն: Հյուրատան սեփականատիրոջ ուղեկցությամբ շրջայց կատարելով տարածքում և խաղողի նորաստեղծ այգիներում ծանոթանալու հյուրատան տարածքում իրականացված և իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության ներդրումային ծրագրերով կատարված ներդումներին: Aratashen Winery ընտանեկան գինեգործական տնտեսությունը հիմնադրվել է 2018 թվականին: Ընդհանուր հողատարածքը զբաղեցնում է մոտավորապես 15հա տարածք, որից 8հա արդեն հիմնված խաղողի այգիներ են, իսկ մնացածը կտնկվեն այս և հաջորդ տարի: Խաղողի տեսակներից ընտրվել են էնդեմիկ հայկական արենի և ոսկեհատ տեսակները՝ 70 և 30 հարաբերակցությամբ:

ՀՀ կառավարության 14.12.2023թ. նիստով հավանության է արժանացել «Առսթոռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում «Նորք» թաղամասի կառուցապատման ներդրումային ծրագիրը, ըստ որի Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող, Արմավիր քաղաքի Հ.Բաղրամյան փողոց 39 հասցեում գտնվող 4.645հա հողատարածքում «Նորք» թաղամասի կառուցապատման ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 31.893.411.168 ՀՀ դրամի ներդրում:

Արտաքին կապեր. 2023թ. ընթացքում մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով արտաքին կապերի բնագավառում շարունակվել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով և նոր կապեր ու համագործակցություններ սկսելու համար գործուն քայլեր են ձեռնարկվել: Տարվա ընթացքում աշխատանքներ են տարվել համագործակցության նոր կապեր ստեղծելու և նոր հուշագրեր ստորագրելու ուղղությամբ:

2022 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված ՀՀ Արմավիրի մարզի և ԳԴՀ Բուրգենլանդի շրջանի միջև համագործակցության հուշագրի շրջանակներում սույն թվականի հունվարի 23-ից 27-ը Արմավիրի մարզի փորձագիտական խումբը ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալի գլխավորությամբ այցելել է ԳԴՀ Բուրգենլանդի շրջանի Նաումբուրգ քաղաք:

24.03.2023թ. մարզպետն ընդունել է Ռուսաստանի Դաշնության Մուրմանսկի նահանգապետ Անդրեյ Չիբիսի գլխավորած պատվիրակությանը: Քննարկել են հետագա համագործակցության ուղիներին վերաբերող հարցեր՝ կարևորելով համագործակցությունն արդյունաբերության, ենթակառուցվածքների զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթության ոլորտներում: Մուրմանսկի նահանգապետը մարզպետին և ոլորտային պատասխանատուներին հրավիրել է Մուրմանսկ՝ հետագա համագործակցության հուշագիր ստորագրելու և երկու մարզերի միջև հարաբերություններն էլ ավելի խորացնելու համար, որը կնպաստի նաև տեղի հայ համայնքի ակտիվությանը:

Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասի պատվիրակութունը 2023թ. մայիսի 23-ից 26-ը աշխատանքային այցով գտնվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում: Մայիսի 23-ին Արմավիրի մարզպետը աշխատակազմում հյուրընկալել է Հայաստանում Չեխիայի արտակարգ և լիազոր դեսպանին և Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասի պատվիրակությանը՝ տարածաշրջանային զարգացման և զբոսաշրջության գծով տեղակալի գլխավորությամբ: Աշխատանքային այցի ընթացքում հյուրերը քննարկել են երկու երկրների

միջև համագործակցության մի շարք հարցեր, ինչպես նաև պայմանավորվածություն ձեռք բերվել հետագայում ևս իրականացնել փորձի փոխանակում:

11.09.2023թ. ՀՀ Արմավիրի մարզպետը հայ-գերմանական ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Լանդթագի դաշնային և եվրոպական, լրատվության, ինչպես նաև մշակույթի հարցերով հանձնաժողովի անդամներին՝ Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Լանդթագի դաշնային և եվրոպական, լրատվության, ինչպես նաև մշակույթի հարցերով հանձնաժողովի նախագահ Դանիել Շտուրմի գլխավորությամբ: Պատվիրակությանն ուղեկցում էր Գերմանիայի Սաքսոնիա-Անհալթ երկրամասում ՀՀ պատվավոր հյուպատոս Միխայել Շմիդտը: Քննարկելով երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր՝ կողմերը պայմանավորվել են առաջիկայում կրկին հանդիպել մասնագիտական խմբերով, կազմակերպելու հուշագրից բխող միջոցառումների իրականացման հետագա ծրագրերը:

13.09.2023թ. մարզպետն ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի նորանշանակ դեսպան Օլիվիե Դըկոտինյիին: Հանդիպման ընթացքում կողմերը մտքեր են փոխանակել հայ-ֆրանսիական երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք ոլորտներում համագործակցության խթանման ու ընդլայնման հեռանկարների մասին:

ՀՀ Արմավիրի մարզպետի գլխավորած պատվիրակությունը հայ-չեխական մարզային համագործակցության շրջանակներում սեպտեմբերի 18-22-ը աշխատանքային այցով գտնվել է Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասում: Մարզպետի գլխավորած պատվիրակությունը սեպտեմբերի 18-ին այցելել է երկրամասի վարչական շենք, որտեղ նրանց դիմավորել է երկրամասի ղեկավարը: 22.09.2023թ. աշխատանքային այցով Չեխիայի Հանրապետության Մորավյան-Սիլեզյան երկրամասում գտնվելու ընթացքում պատվիրակությունն սեպտեմբերի 21-ին այցելել է մեր հայրենակից, «Մառլենկա Ինթերնեշընլ» ընկերություն և հանդիպել հիմնադրի և Չեխիայի Մորավյան-Սիլեզյան երկրամասի գործարարների հետ: Հանդիպմանը ներկա են եղել Չեխիայի Հանրապետությունում ՀՀ դեսպանը, Մորավյան-Սիլեզյան երկրամասի ղեկավարը, տեղի գործարարներ և այլն:

19.09.2023թ. ՀՀ Արմավիրի մարզ է այցելել Ռումինիայի Կլուժ նահանգի նահանգային խորհրդի փոխնախագահ Վակար Իշտվանի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպման հիմնական նպատակն էր ՀՀ Արմավիրի մարզի և Ռումինիայի Հանրապետության Կլուժ նահանգի միջև հաստատված կապերն ամրապնդելու և ապակենտրոնացված համագործակցությունն ակտիվացնելու հնարավորությունների քննարկումը (դեռևս 2017թ. հուլիսի 1-ին ՀՀ Արմավիրի մարզի և Ռումինիայի Հանրապետության Կլուժ նահանգի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր): ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալի հետ հանդիպման ընթացքում մանրամասն քննարկվել են ՀՀ Արմավիրի մարզի և Ռումինիայի Հանրապետության Կլուժ նահանգի միջև համագործակցության հարցերն ու հետագա անելիքները:

13.12.2023թ. ՀՀ Արմավիրի մարզպետն ընդունել է Հայաստանում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին: Քննարկվել է փոխգործակցության շարունակականության ապահովման և հուշագիրը ստորագրելու, ինչպես նաև գյուղատնտեսության և ենթակառուցվածքների ոլորտում հնարավոր ծրագրերի շուրջ համագործակցությանը վերաբերող հարցեր, որոնց իրագործման ուղղությամբ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ:

22.12.2023թ. ՀՀ Արմավիրի մարզի և ՌԴ Վոլոգդայի նահանգի համագործակցության արդյունքում ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքում տեղի է ունեցել «Ձմեռ պապի ամանորյա ճամփորդությունը» միջազգային նախագիծը: Վելիկի Ուստյուգից ժամանած իսկական Ձմեռ պապը

հանդիպել է Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 5 և թիվ 10 հիմնական դպրոցների աշակերտների հետ:

2023թ. ընթացքում ձևավորված համագործակցություններ. 2023թ. հուլիսի 21-ին ՌԴ Իրկուտսկ քաղաքում ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ նիստի շրջանակում Արմավիր և Իրկուտսկ համայնքների միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

2023թ. հոկտեմբերի 7-ին Էջմիածին և Բեթղեհեմ քաղաքների միջև կնքվել է քույր քաղաքների համաձայնագիր: Բեթղեհեմի քաղաքապետ Հաննա Հանանիայի գլխավորած պատվիրակության Հայաստան կատարած եռօրյա աշխատանքային այցի առանցքում համաձայնագրի կնքումն էր: Հյուրերը շրջայց են կատարել Վաղարշապատի Պատմազգագրական թանգարանում, Մայր Աթոռի Խրիմյան Հայրիկ թանգարանում, Ցեղասպանության թանգարանում, համայնքապետարանի հարակից պուրակում տնկվել է բարեկամության ծառ:

Երևանի «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի նախաձեռնությամբ և ՀՀ Արմավիրի մարզային իշխանության աջակցությամբ Արմավիր քաղաքի թիվ 1 մշակույթի տանը տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայի 876 ամյակին նվիրված միջոցառում: Միջոցառմանը գեղարվեստական ելույթներով հանդես են եկել Հայաստանի տարբեր մարզերի ստեղծագործական խմբեր և անհատ կատարողներ:

Զբոսաշրջություն. ՀՀ Արմավիրի մարզում կան բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, գյուղական, ագրո և էնո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը: Հավաքագրվել է մարզի զբոսաշրջային ռեսուրսների ու ներուժի վերաբերյալ տեղեկատվությունը և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվել է Արմավիրի մարզի զբոսաշրջային գրավչությունները ներկայացնող եռալեզու սահիկաշար՝ տեղական, միջազգային շուկաներում գործնական հանդիպումների, կոնֆերանսների, աշխատաժողովների և մարզի ճանաչելիությանը միտված համանման այլ միջոցառումների ժամանակ օգտագործելու նպատակով:

2022թ. նոյեմբերի 15-ին Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Բուրգենլադ դաշնային շրջանում ստորագրվել է «Արմավիրի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Բուրգենլանդ շրջանի (Զաքսեն-Անհալթ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) միջև համայնքային զարգացման գործընկերության հաստատման համար» հուշագիրը, որի չորս նպատակներից է մարզի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային օբյեկտների զարգացումը և պահպանումը, դրանց զբոսաշրջային շուկայավարումը, ինչպես նաև գինեգործության, գինու տուրիզմի զարգացումը: 2023թ. հունվարի 23-27-ը մարզային փորձագիտական խմբի ԳԴՀ Բուրգենլադ շրջան այցելության ընթացքում ներկայացվել է Արմավիրի մարզի գինեգործության, զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ սահիկաշար: Արդյունքում, քննարկվել են համատեղ ծրագրերի, միջոցառումների իրականացման հնարավորությունը՝ շահագրգիռ մասնավոր ընկերությունների աջակցությամբ:

16.03.2023թ. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում ՀՀ Զբոսաշրջության կոմիտեի ներկայացուցիչները ոլորտի պետական ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ քննարկել են մարզի զբոսաշրջության ոլորտին առնչվող հարցեր, ինչպես նաև մարզի զբոսաշրջային ոլորտում առկա խնդիրներն ու մարտահրավերները: Ներկայացվել են զբոսաշրջության կոմիտեի հիմնական գործառույթները, զբոսաշրջության քաղաքականությունը, միջազգային համագործակցության շրջանակը, մարքեթինգն ու ոլորտի առաջխաղացմանն ուղղված հարցեր:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կողմից Երևանի Խաչքարերի պուրակում 2023 թվականի մայիսի 27-ից 28-ը կազմակերպվել է «Ճանաչիր Հայաստանը» մարզային ներքին զբոսաշրջային ցուցահանդեսը՝ բոլոր մարզերի մասնակցությամբ: ՀՀ Արմավիրի մարզը երկու

օր «Արևահամ Արմավիր» կարգախոսով առանձին տաղավարում հնարավորություն ունեցավ ներկայացնելու մարզի արտադրանքը, ստեղծագործող վարպետների աշխատանքները, մարզի բերք ու բարիքը և հարուստ պատմամշակութային ժառանգությունը, ցուցահանդեսի ընթացքում անցկացվել են վարպետաց դասեր և յուրահատուկ փորձառություններ, ինչպիսիք են կավագործությունը, տիկնիկագործությունը, բատիկան, փայտագործությունը, գոբելենը, մաքրամեն և այլն, ինչպես նաև յուրաքանչյուր մարզ հանդես է եկել 1 ժամ տևողությամբ մշակութային համարով՝ պար, երգ, բեմականացում՝ նպատակ ունենալով բացահայտելու և ճանաչելի դարձնելու Արմավիրը, առանձնացված գաստրո հատվածում պրոֆեսիոնալ խոհարարը մարզային ներկայացուցչի հետ համատեղ պատրաստվել է «թավա քյուֆթա» ճաշատեսակը: Միջոցառման ընթացքում տեղի կայացած խաղարկություններին նախապատրաստվել և ներկայացվել են մարզի գործարարների կողմից նվերներ: Մարզի բոլոր համայնքները պատրաստակամ ներկայացրել են իրենց համայնքի ներուժը, բերք ու բարիքը և համայնքին բնորոշ փորձառությունները: «Ճանաչիր Հայաստանը» ներքին զբոսաշրջային ցուցահանդեսը Զբոսաշրջության կոմիտեի կողմից 2-րդ անգամ է կազմակերպվում և նպատակ ունի դառնալու ամենամյա՝ խթանելով զբոսաշրջիկների հոսքը դեպի մարզեր և բացահայտելու մարզային հնարավորությունները նորովի:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում քննարկվել և հավանության է արժանացել ««Զբոսաշրջային կենտրոն» հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում ձևավորվող 20 կլաստերների ցանկում է «Արմավիր» կլաստերը: Միաժամանակ առաջարկվել է կլաստերում բնակավայրերի ընդգրկումն իրականացնել համապատասխան գերատեսչությունների, ինչպես նաև մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների հետ քննարկման արդյունքում: Ծրագիրը նոր հնարավորություն է զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման համար, որը նախատեսում է արդյունքներ գրանցել 10 տարվա ընթացքում:

«Յու Էմ Ագրո» ՍՊԸ կողմից ներկայացվել է ներդրումային ծրագիր՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սահմանամերձ Բագարան և Երվանդաշատ գյուղերում իրականացնելու նպատակով՝ գյուղատնտեսական և զբոսաշրջային բաղադրիչով: 16.05.2023թ. առաջարկություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե՝ Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանից դեպի Երվանդաշատ և Բագարան բնակավայրեր տանող ճանապարհահատվածի հիմնանորգման հարցը առաջնահերթ իրականացվող որևէ ծրագրում ընդգրկելու համար: 23.05.2023թ. ստացված պատասխանի համաձայն՝ վերոգրյալ ճանապարհահատվածի հիմնանորոգման հարցը կդիտարկվի «Արմավիր» կլաստերի զարգացման հայեցակարգի առաջնային միջոցառումների ցանկում:

Հաշվի առնելով ՀՀ Վարչապետի կողմից ինչպես ՀՀ Կառավարության նիստերի, այնպես էլ բազմաթիվ այցերի ընթացքում զբոսաշրջային այցելավայրերում տեղեկատվական ցուցանակների բացակայության կամ դրանց ոչ պատշաճ վիճակի խնդրի լուծման հրատապության հարցը, Զբոսաշրջության կոմիտեն նախաձեռնել է ՀՀ բոլոր մարզերի հիմնական այցելավայրերում տեղեկատվական բազմալեզու ցուցանակների ստեղծման և տեղադրման գործընթաց (թվով 123 ցուցանակ): Կոմիտեն աշխատանքներ է ձեռնարկել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ տեղեկատվական ցուցանակների բովանդակության մշակման ուղղությամբ, որից հետո Կոմիտեն կիրականացնի ցուցանակների տպագրությունը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզում զբոսաշրջիկների կողմից առավել այցելվող պատմամշակութային այն վայրերի ցանկը, որտեղ առկա է տեղեկատվական վահանակների տեղադրման կարիք: ՀՀ Արմավիրի մարզի հիմնական այցելավայրերի ցանկին

համապատասխան տեղեկատվական բազմալեզու ցուցանակների էսքիզը, տեղադրման համար թույլտվությունների ստացման և տեղադրման ընթացքում աջակցություն ցուցաբերելու հարցերը քննարկվել է մարզի համայնքների ղեկավարների հետ: Զբոսաշրջային այցելավայրերում, որտեղ նախատեսվում է ցուցանակների տեղադրում, վերոնշյալ աշխատանքների իրականացման ընթացքում համայնքները պատրաստակամություն են հայտնել ցուցաբերելու համապատասխան աջակցություն:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի հետ համագործակցության արդյունքում ՀՀ կառավարության «Արձակուրդը Հայաստանում» ծրագրի շրջանակներում լուսաբանվել են մարզի տպավորիչ և հյուրընկալ հասցեներ Փարաքար, Բամբակաշատ և Փշատավան բնակավայրերում:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների հետ համագործակցության արդյունքում «Face Control Travel/Ֆեյս Քընթրոլ ճանապարհորդություն» հաղորդաշարը լուսաբանել է Վաղարշապատ, Մեծամոր և Խոյ համայնքների մի շարք զբոսաշրջային գրավչություններ: Մարզի այլ համայնքների մասով աշխատանքները շարունակվում են:

Մշտական աշխատանքներ են տարվել համայնքների հետ մարզի հեռավոր, գեղեցիկ անկյուններում համապատասխան միջավայր ձևավորելու ուղղությամբ՝ միջազգային բրենդ ստեղծելով և դրանով իսկ նպաստելով Հայաստանի, նաև մարզի նկատմամբ զբոսաշրջիկների կողմից հետաքրքրության բարձրացմանը: Համայնքների ղեկավարների առաջարկվել է ներկայացնել տեղեկատվություն համայնքը զբոսաշրջային առումով ներկայանալի դարձնելու նպատակով իրականացված աշխատանքների վերաբերյալ, որոնք ձևավորել են համապատասխան միջավայր (ստեղծելով համայնքային բրենդ)՝ նպաստելով համայնքի նկատմամբ զբոսաշրջիկների կողմից հետաքրքրության բարձրացմանը:

23.10.2023թ. ՀՀ կառավարության որոշմամբ ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերին հատկացված միջոցների միջև կատարվել է վերաբաշխում, ըստ որի՝ Արմավիրի մարզի Շուշանավանքի նորոգման, ամրակայման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի համար հատկացվել է 1 մլն 608 հազար դրամ:

2023թ. սեպտեմբերի 6-8-ը Երևանում կազմակերպվել է Համաշխարհային զբոսաշրջային ներդրումային ֆորում, որին մասնակցել են մարզի ներկայացուցիչները: Համաշխարհային զբոսաշրջային ներդրումային ֆորումը մեկ հարկի ներքո հյուրընկալել էր ՄԱԿ ԶՀԿ-ի անդամ պետությունների զբոսաշրջության ոլորտի պատասխանատուների, օտարերկրյա և տեղական ներդրողների, դոնոր կազմակերպությունների, միջազգային և տեղական խոսնակների, ԶԼՄ ներկայացուցիչների, մասնավոր և շահագրգիռ մարմինների մասնագետների: 2023թ. ֆորումը Հայաստանում կազմակերպելը նպատակ ուներ նպաստելու միջազգային մասնագետների կողմից զբոսաշրջության ներդրումային ոլորտում փորձի ուսումնասիրմանը և ներկայացմանը, ներդրումային ոլորտում առկա մարտահրավերների և ռիսկերի բարձրաձայնմանը:

Քննարկվել և հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2024-2028թթ. ռազմավարությունը և ռազմավարության գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Մարզպետի աշխատակազմի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ աշխատանքներ են կատարվել նաև մարզպետի աշխատակազմում ներքին գործավարության վարման, փաստաթղթերի ընդունման, օպերատիվ հաշվառման և տնօրինման միասնական համակարգի պահպանման, մարզպետի աշխատակազմի կարիքների համար 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված և համապատասխան ծախսային ծրագրերի իրականացման նպատակով գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկում ընդգրկված ապրանքանյութական արժեքների ձեռքբերման, հաշվառման,

մարզպետի աշխատակազմին ամրացված անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պաշտպանության և այդ գույքի արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների, մարզպետի աշխատակազմի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական, ինչպես նաև տրանսպորտային սպասարկման ապահովման ուղղությամբ:

Իրականացվել են նաև՝ մարզպետի աշխատակազմի կառավարման ներքո գտնվող ՊՈԱԿ և ՓԲԸ տնօրենների մրցույթների կազմակերպման, անձնական գործերի վարման, հաշվառման, հանձնման-ընդունման, պահպանման, մեթոդական օժանդակության տրամադրման, արձակուրդի ժամանակացույցի կազմման և տրամադրման, Մարզպետի աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացման, անձնակազմի կառավարման գծով մարզպետի որոշումների և գլխավոր քարտուղարի հրամանների նախագծերի նախապատրաստման, ստորագրված հրամանների հաշվառման, դրանց բնօրինակների պահպանության և առաքման հանձնելու աշխատանքների կատարման, կադրային որոշումների մասին համապատասխան աշխատողներին տեղեկացման, աշխատակիցների անձնական գործերի վարման, հաշվառման, հանձնման-ընդունման, պահպանման, աշխատանքային կարգապահության վերահսկողության իրականացման, արձակուրդի ժամանակացույցի կազմման, օենսդրությամբ սահմանված կարգով անձնական գործերի վարման, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված գործառույթների ժամկետում և ճշգրիտ իրականացման, օրենսդրության պահանջների կատարման, համապատասխան աշխատողներին իրազեկման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել է ընդհանուր քանակով 25725 և առաքվել 9527 փաստաթուղթ, տարաբնույթ հարցերի կապակցությամբ ընդունվել են մարզպետի 1003 որոշումներ:

Մարզպետի աշխատակազմ առաջարկություններով, դիմումներով և բողոքներով քաղաքացիների դիմելը դիտարկելով որպես անձի իրավունքների իրականացման և պահպանման, բնակչության հետ մարզպետի աշխատակազմի կապերի ամրապնդման կարևորագույն միջոց, հետևողական աշխատանքներ են տարվել օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննության առնելու, օրենսդրությանը համապատասխան դրանցում արծարծված խնդիրների լուծումն ապահովելու և պատասխանելու նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ, ստացվել են քաղաքացիների ընդհանուր թվով 2435 տարաբնույթ դիմումներ, առաջարկություններ և բողոքներ, որոնց գերակշիռ մասին (2406 նամակների) օրենսդրությամբ սահմանված կարգով տրվել են համապատասխան լուծումներ: Նշված 2406 նամակներից 767-ը եղել է դրամական աջակցության խնդրանքով, որոնք ստացել են դրական լուծումներ:

Մարզպետի մոտ կազմակերպված ընդունելություններին գրանցված 57 քաղաքացիներից ընդունելություններին մասնակցել են 51 քաղաքացիներ (հերթագրված 6 քաղաքացիներ չեն ներկայացել ընդունելություններին), որոնց կողմից բարձրացված հարցադրումներից դրական լուծում են ստացել 26–ը, օրենսդրությանը համապատասխան սպառիչ պարզաբանումներ են ստացել 25–ը:

Կայացել և արձանագրվել են ՀՀ Արմավիրի մարզի խորհրդի 4 հերթական և 1 արտահերթ նիստեր և 2 խորհրդակցություններ:

Անձնակազմի կառավարում. 2023 թվականի ընթացքում իրականացվել են անձնակազմի կառավարման գծով ՀՀ Արմավիրի մարզպետի 512 որոշումների և գլխավոր քարտուղարի 979 հրամանների նախագծերի նախապատրաստման և ստորագրման ներկայացման աշխատանքները:

Իրականացվել են մարզպետի կողմից ստորագրված որոշումների և գլխավոր քարտուղարի կողմից ստորագրված հրամանների հաշվառման, դրանց բնօրինակների պահպանության և առաքման

հանձնելու, ինչպես նաև դրանց մասին համապատասխան աշխատողներին տեղակացման աշխատանքները:

2023 թվականին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի հաստիքային միավորների թիվն 96 է, քաղաքացիական ծառայողների հաստիքների թիվը՝ 75:

Հաշվառվել են մարմնի քաղաքացիական ծառայողների կողմից կատարած աշխատանքների 2022թ. երկրորդ, 2023թ. առաջին և երկրորդ կիսամյակների կատարողականները՝ անմիջական ղեկավարների գնահատման ակտերով, և կցվել անձնական գործերին:

Ապահովվել են մարզպետի աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների (քաղաքացիական ծառայության թափուր և ժամանակավոր թափուր պաշտոնի մասին տեղեկացնելու, քաղաքացիական ծառայության պաշտոնում ժամկետային աշխատանքային պայմանագրեր կնքելու, քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու և այլն) ժամկետների պահպանման աշխատանքները:

Ըստ անհրաժեշտության, Մարզպետին, Գլխավոր քարտուղարին և Գրասենյակին տրամադրել է քաղաքացիական ծառայության մասով անհրաժեշտ տեղեկատվություններ, այդ թվում՝ տեղեկատվա-վերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով:

ՀՀ վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ ապահովվել է «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հաշվառումից հանելու և «ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ» մարմինը հաշվառելու գործընթացը: 20.03.2023թ. հաստատվել են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները: 2023թ. հունիսի 28-ին ավարտվել է վերակազմակերպման ամբողջ գործընթացը՝ համապատասխան կառուցվածքային փոփոխություններով և վերանշանակումներով: 2023թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնների թիվը 13-ն է (11 հիմնական թափուր, 2-ը՝ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող), որոնցից 2-ը համալրված են պայմանագրային աշխատողներով (93-31.3-Մ3-2, 93-30.2-Մ3-1): Սահմանված կարգին համապատասխան մրցույթները հայտարարվում և պարբերաբար տեղադրվում են ՀՀ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում, ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am), ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում: Միևնույն ժամանակ, կայքէջում է տեղադրվում աշխատակազմի ենթակայության կառույցներում առկա թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկատվություն: ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում թափուր են մարզպետի տեղակալի, մարզպետի տեղակալի օգնականի 2-ական հաստիքները (ընդհանուր թվով 4, որից մեկը՝ ժամանակավոր թափուր):

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական ծառայության 11 պաշտոն համալրելու նպատակով Աշխատակազմում հայտարարվել է 11 մրցույթ՝ 3 արտաքին (93-30.2-Ղ4-1,93-30. 7-Մ2-1, 93-31. 1-Մ3-1), 8 ներքին (93-31.1-Մ2-2, 93-31.1-Մ2-3, 93-30.1-Մ2-6, 93-30.3-Մ3-1, 93-31.2-Մ3-2, 93-31.2-Մ3-3, 93-31.2-Մ3-4), որոնցից 2-ը կկայանան 2024 թվականի փետրվար ամսին (93-1.4-Մ6-1): Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողների ժամանակավոր թափուր պաշտոնները համալրելու նպատակով հայտարարվել է 6 մրցույթ, որի արդյունքում կնքվել է 3 ժամկետային աշխատանքային պայմանագիր, որից 2-ը լուծվել է: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված անձինք նշանակվել են համապատասխան պաշտոններում:

Միաժամանակ 3 անգամ հայտարարվել և անցկացվել է մրցույթ «Արմավիրի Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար, որոնցից 2-ի արդյունքում հաղթող չի ճանաչվել: Հայտարարվել և անցկացվել է նաև

«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթը: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված անձնիք նշանակվել են համապատասխան պաշտոններում:

Քաղաքացիական ծառայության պաշտոնից անձնական դիմումի համաձայն ազատվել են 2 քաղաքացիական ծառայող, այլ պաշտոնի նշանակվելու հիմքով:

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները: Քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների գծով վերապատրաստումներ իրականացնելու նպատակով կազմվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնեցմանն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման տարեկան հայտը: Համապատասխան համաձայնությունը ստանալուց հետո կազմվել են վերապատրաստման ենթակա քաղաքացիական ծառայողների վերապատրաստման անհատական ծրագրերը:

2023 թվականի վերապատրաստման գործընթացն ամբողջությամբ իրականացվել է: Կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպվել են քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից 7 ծրագրերի մասով՝ 29 ունկնդիր, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպվել են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից՝ 10 ծրագրերի մասով՝ 31 ունկնդիր:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ ունկնդիրների պատրաստման 2023թ. ուսումնական տարվա դասընթացներին մասնակցելու նպատակով՝ 2023թ. հաստատված ժամանակացույցով վերապատրաստվել են 9-ը քաղաքացիական ծառայողներ:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում ծառայողական քննություն չի իրականացվել:

Պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նշանակման նախկին կարգին համապատասխան՝ 2023թ. հունվարի 1-ից մինչև նոր կարգի ուժի մեջ մտնելը, պաշտոնի է նշանակվել պետական ոչ առևտրային կազմակերպության 9 տնօրեն:

Պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հաշվետու ժամանակահատվածում՝ համաձայն 2023 թվականին ուժի մեջ մտած նոր կարգի, հայտարարվել են համապատասխանաբար՝ 56 և 92 մրցույթներ: Մրցույթների արդյունքում պաշտոնի է նշանակվել ՝ 4 տնօրեն և 6 վարչատնտեսական մասի համակարգող:

Ապահովվել է մարզպետի, գլխավոր քարտուղարի կողմից նշանակված անձանց 2023թ. ամենամյա արձակուրդների տրամադրումը՝ ըստ հաստատված ժամանակացույցերի և դիմումների: Իրականացվել է աշխատանքային կարգապահության վերահսկողությունը:

Ըստ անհրաժեշտության, անձնակազմի կառավարման հարցերով մեթոդական օժանդակություն է տրամադրել մարզպետի աշխատակազմի կառավարման ներքո գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպություններին և ՓԲԸ-ներին:

Իրականացվել են աշխատողների ծառայողական, ինչպես նաև գործուղման վկայականների տրամադրման աշխատանքները:

Փոփոխության են ենթարկվել մարզպետի աշխատակազմի թվով 17 քաղաքացիական ծառայողների դրույքաչափերը:

Ապահովվել է մարզպետի աշխատակազմում ուսումնական հաստատության թվով 11 ուսանողի պրակտիկայի կազմակերպումը:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապեր. Ակտիվ աշխատանքներ են տարվել մարզի տեղեկատվական քաղաքականության իրականացման և մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքի վարման ուղղությամբ: Ապահովվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի, մարզպետի աշխատակազմի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան էջի, ինչպես նաև ՋԼՄ հարթակներով տարածելու միջոցով: Առանձին դեպքերում ապահովվել է նաև համայնքապետարաններին և մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող կրթական ու առողջապահական հաստատություններին վերաբերող տեղեկությունների լուսաբանումը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պատասխանվել են լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ստացված գրավոր, ինչպես նաև ֆեյսբուքյան հարթակում գրանցված առցանց հարցումներին:

Ապահովվել է նաև (տվյալ դեպքում միայն Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզպետի աշխատակազմի կայքում) համայնքների ղեկավարների և ավագանու որոշումների, համայնքային բյուջետային եկամուտների ու ծախսերի, համայնքների ղեկավարների կիսամյակային հաշվետվությունների և համայնքներում իրականացված վարչական և մասնագիտական հսկողության ակտերի ու դրանցում արձանագրված խախտումների վերցման վերաբերյալ տեղեկանքների, ինչպես նաև համայնքներին վերաբերող այլ նյութերի հրապարակումը:

Աջակցություն է ցուցաբերվել Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի շահագործման և «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջև փոխգործակցության ապահովման, ինչպես նաև համայնքապետարաններում պաշտոնական կայքերի ներդրման և վարման աշխատանքներին:

Ակտիվ աշխատանքներ են տարվել նաև մարզպետի աշխատակազմում առկա արխիվային փաստաթղթերի ընթացիկ մշակման, արխիվային ֆոնդի գործերի և համապատասխան փաստաթղթերի սահմանված կարգով մարզպետի աշխատակազմի արխիվ հանձնման, ընդունման, հաշվառման, պահպանման, մատչելիության ապահովման, դրանց հիմքերի մշակման և հետագայում պետական արխիվային պահպանության հանձնելու ուղղությամբ:

Իրավական հարցեր. ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան 2023թ. ընթացքում աշխատանքներ են կատարվել դրված խնդիրների լուծման, գործավարության ճշգրիտ վարման, փաստաթղթերին սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով ՀՀ օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների իրականացման գործում կազմակերպական խնդիրների լուծման ապահովումը: Կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ, նախապատրաստվել և մարզպետի, ինչպես նաև գլխավոր քարտուղարի հաստատմանն է ներկայացվել համապատասխանաբար թվով 1033 որոշում և թվով 979 հրաման:

Պատասխանվել է քաղաքացիներից ստացված բազմաթիվ դիմումների, որոնց գերակշիռ մասը վերաբերել է բնակարանային, հողային խնդիրներին, դրամական աջակցության, իրավական ակտերի պարզաբանման, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգման հարցերին, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են իրենց հնարավոր լուծումները: Գործնական աշխատանքներ են տարվել նաև մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից ընդունված իրավական ակտերն ուսումնասիրելու և գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Լուրջ աշխատանքներ են տարվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրության ուղղությամբ, որոնց արդյունքում նախապատրաստվել և ներկայացվել են բազմաթիվ առարկություններ՝ առաջարկելով ինչպես

համայնքների ղեկավարներին, այնպես էլ ավագանու անդամներին՝ օրենսդրությանը հակասող իրավական ակտերը համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին: Ընդհանուր օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման իրազեկման ուղղությամբ պարբերաբար համայնքներ, մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև բժշկական հաստատություններ են ներկայացվել մեթոդական շրջաբերական գրություններ: Իրականացվել են ամենօրյա աշխատանքներ մարզի համայնքների համապատասխան աշխատակազմերի քարտուղարների հետ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների ուսուցման, պարզաբանման և կիրառման, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավասությունների ուղղությամբ:

Վերահսկողություն է իրականացվել հողային օրենսդրության շրջանակներում համայնքների ղեկավարների կողմից հողերի օտարման՝ աճուրդային կարգով իրացման և վարձակալության տրամադրելու գործընթացի նկատմամբ: Իրավական վերահսկողություն է իրականացվել համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ, որի արդյունքում ներկայացվել են համապատասխան առարկություններ՝ պարզաբանման կարգով իրազեկելով գործող օրենսդրական պահանջները: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022թ. նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն՝ իրավական հսկողություն է իրականացվել մարզի թվով 4 համայնքում՝ Մեծամոր, Փարաքար, Արաքս և Խոյ: Մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տարբեր ոլորտներին առնչվող որոշումներով, ինչպես նաև մարզպետարանի գլխավոր քարտուղարի հրամաններով ստեղծված աշխատանքային խմբերի աշխատանքներին:

Նախորդ տարիներից դատական մարմիններում, մարզպետի աշխատակազմը որպես պատասխանող կողմ, ընթացքի մեջ են թվով 3 դատական գործեր (քաղաքացիական գործեր, որոնցից 2-ը բողոքարկման փուլում):

ՀՀ Արմավիրի մարզպետի և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի կողմից տրված ցուցումներն ու հանձնարարականները կատարվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: